

Գ. ԱՐՏՈՒՆԻ

ԲԱՆԱՍ-ՂԵՒԻՔ-ՅՈՒՆԵՐ

391.93

Ա-95

U.S.

U.S.



01 JAN 2009

ԳՐԻԳՈՐ ԱՐՑՈՒՆԷ

19 NOV 2010

891.99
4-95 *uy*

ՔԱՆԱՍՏԵՂԾՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ՊԵՏԱԿԱՆ
1989

ՀՐԱՏԱՐԱԿԶՈՒԹՅՈՒՆ
ՑԵՐԵՎԱՆ

25 .02. 2013

22417



2115
39

ՅԵՐԳԵՐ
ԳՐԿԱԾ ԱՌԱՋՆՈՐԴՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Լ Ե Ն Ի Ն

Նստել եմ ահա սեղանիս առաջ,
 Շվեց հատորյակ՝-ն եմ մտախոհ կարդում,
 Դեմից սի զույգ վառ աչքերն ինձ հառած
 Նկարն ե ծպտում
 Մի հսկա մարդու,
 Կարդում եմ կրկին
 Եջերը զբոխ
 Ու մտաբերում հուրն Հոկտեմբերի,
 Յերբ Լենինը մեծ
 Հին կյանքը քանդեց,
 Դարձավ անսպառ ակունքն արևի...
 Լենին, զու մեզ հետ
 Կապրես առձավետ,
 Ինչպես մեր սրտի անզին բնակիչ,
 Դու մեր գործի մեջ
 Արեգ ես անշեջ,
 Ովկիան լույսերի անմալ ու աննինջ,
 Շրջում ես հպարտ
 Յեվ զյուզ, ե՛ք քաղաք,
 Մտնում ես ուրախ կոխող, զործարան,

Ու խի՞նդ ես բուրում...

Յեվ նրանց վրա

Ծաղում ես վորպես առավոտ գարնան:

Ծով աստղերի պես,

Հերոսները վես

Թևեր են առնում լույսի տակ քո ջինջ

Վորոնց աչքերից ցոլում է հրկեղ՝

Անունդ, վորպես արեւ կիզիչ:

Ձայնդ ամենուր

Զնգում է ժաքուր,

Շանթից ել զորեղ ու կայծակնավառ...

Յեվ Հոկտեմբերի բոցերը վառման

Հասակ են առնում աշխարհում արար,—

Քո կամքով անթեք,

Յելել է արդեն

Մագրիդը, վորպես ամբողջ անասան,

Վոր բաժիններին, հողմերին հանձնի

Կապանքը դաժան...

Յեվ կյանքը հանի,

Դնի իր արդար, ուղիղ հունի մեջ,

Նվիրի մարդուն դարեր փառավոր,

Վոր բացվի քո մեծ արևով անշեջ

Նրա կրճրի մեջ չքնանդ առավոտ...

* * *

Մեր հայրենիքի այս վոսկեդարում

Կյանքը զարուն է մի կանաչագարդ՝

Զուգվել են զվարթ լեռներում, հանդում...

Կանաչ անտառներ, ե՛ր նարդիդ, ե՛ր վարդ:

Յեվ ահա կայտառ

Մտա մի անտառ,

Խիտ են ծառերը, հսկա, հաղթանդամ,

Յեվ զլխիս վերև

Բազմած ճյուղ, տերև,—

Մի ծով յերկինք է կանաչ ու փարթամ:

Այս անտառի պես,

Յեվ խիտ են, և վես,

Լէնին, շարքերը մեր դուրսագնների,

Վորոնք յելել են վերջին պայքարի,

Պատում են կուրծքը լեռների, ժայռի,

Վառում են անթիվ հուր արեգակներ,

Վոր մեր աշխարհում հորդի լույս ջրվեժ,—

Արևից ել թեժ,

Աստղերից պայծառ,

Վոր հար կանաչեն ծիլ, ծաղիկ ու ծառ...

.....

Լենին, դու մեղ հետ

Կմնաս հավետ,

Ինչպես մեր սրտի բնակիչ անդին,

Դու մեր հոգու մեջ

Վառել ես անշեջ

Սերը խնդութիւն՝ յերջանիկ կյանքի:

Ստալինը կյանքի նավը աներեր

Տանում է դեպի հեռուն լուսարեր,

Ուր սեր է բուրում ծաղկանց նման պերճ,

Յեվ կոմունիզմի յերգերը անվերջ

Ծաղկում են չքնաղ՝ զարնան պես անշեջ,

Ամեն կրճրի տակ,

Ամեն սրտի մեջ:

Ծ Ն ՈՒ Ն Դ Ը

(ՎՐԱՅԱԿԱՆ ՖՈԼԿԼՈՐԻՑ)

Կախեթի առասպելներից մեկում ասված է՝
յերբ հերոս է ծնվում, նրա տան բակում
արծիվն է իջնում և ողում բազեն յերգում:

Վոչ բակի մեջ արծիվն իջավ,
Վոչ բազեն եր յերգում հստակ.
Լոկ մի ծիաիկ ծառից թռավ
Ու զողզողաց պատերի տակ:

Ծիառն սոված... Յեվ տնակում
Չկար ցուրեն, պանիր ու հաց.
Շուրջը ձմեռն եր փաթիլ թափում,
Բակերը մերկ, խոնավ ու թաց:

Հանկարծ անուշ ձայնը թնդաց,—
—Տղա ծնվեց մեր ալս թաղում.
Փորը տնակում յերգը խնդաց,
Հայրն է ցնծում, ու բախանում:

Հա, թերում են տանձ ու խնձոր,
Կանայքը մոր պատիվ անում...

Մայրը մանկան զրկել է խոր,
Ժպտում է, բայց ձայն չի հանում:

Մանկան կրծքին շաքար դրին,
—Անուշ լինի շաքարի պես:

Որորոցում պողպատ դրին,
—Ամուր լինի պողպատի պես:

Որորոցը լույս տեղ դրին,
—Անմար լինի արևի պես:

Յեվ անուշն էլ Սոսո՝ դրին,
—Բարձր լինի սոսիի պես:

1938

1 Սոսո. — Ընկեր Սասիինն մանկության ժամանակ Սոսո
էջին կանչում:

ՅԵՐԳ ԱՌԱՋՆՈՐԴԻՆ

1.

Յերկնին լուսին, աստղ ե սաղում,
Վիհ մարտիկին՝ ձեռքը պողպատ,
Ծովին՝ դեմքը վառ ու լաղուր,
Յեւ ալիքի յերզը զվարթ:
Հողին՝ դարնան ծաղիկը պերճ,
Սրտին՝ արև ու ծիածան,
Հայրենիքիս՝ քո դեմքը մեծ,
Ժպտուն, ինչպես շողքը պայծառ:

2.

Ո՛վ առաջնորդ, քո սիրտը վառ
Ունի ինչքան ծաղիկ ու բույր:
Այգաբաց ե մի խանդավառ,
Ուրախ կյանքի մի հորդ աղբյուր:
Յերևմանից վլաղիվառուի,
Մեծ Մոսկովից մինչև Բեռն.
Քո լույսով են մարդիկ անհող
Շնչում, առնում թափ ու թևեր:

3.

Ամեն աստղից ու արևից
Ջրնաղ ես դու, հավետ անշեջ.
Մեր սրտերում, հանքում, արտում,
Դու յես ժպտում անմար ու պերճ...
Դու յես տալիս շողեր ու ցող,
Վոր ծաղկում են ծաղիկ ու վարդ.
Հայրենիքիս, ով առաջնորդ,
Լույս ես տալիս, և՛ սեր, և՛ կյանք:

1937

* * *

Կոմսոմոլիս յի սիրուն, սեպտյա,
Վոր տեանես, ինչպես հերթաթի փերին.
Մետաքսով հյուսեց նախշուն խալիչա,
Խնդուկուն տվեց նրա թելերին.
Հյուսեց պատկերը, գրեց սրտալի.
«Քեզ կյանք ու արև, ընկեր Ստալին»:

1936

ԱՇՏԱՐԱԿԻ ԿՈԼԽՈԶՆԻԿԻ ԽՈՍՔՆ
ԱՌԱՋՆՈՐԴԻ ՄԱՍԻՆ

Վերցնում ե թասը գինով լիփ-լեցուն,
(Խոսում ե սիրտը և վոչ թե լեզուն).
—Արև, լերկար կյանք նրան հար-հավետ,
Վոր կյանքը լցրեց ծաղկով բուրավետ.
Խինդ տվեց մարդուն, վազին բերք տվեց,
Անմահական ջուր, գուլալ լերդ տվեց:
Ահա հասել են այգիները ճոխ,
Նազանքով պես-պես ժպտում ե խաղող.
Հայրենիքը մեր—շող, ծիլ ու ծաղիկ,
Յերջանիկ կյանքի դուռը բաց արինք:
Անուս չորանին դարձրեց զրազետ,
Սեր, յեռանդ տվեց մարդուն ու կյանքին,
Զուգեց, զարգարեց ծաղկով բուրավետ
Մեր խորհրդային աշխարհը անգին:
Աշխարհումը վողջ աղջիկն ու տղան
Ծաղիկը վառման, ծառը պտղալի,
Հողը բերքառատ, ջուրը կլկլան,
Բոլորը ունեն մի հայր—Ստալին:
Այսպես ենք յերգվում նրա արևով,

215
39

Յեւ փառք ենք տալիս առաջնորդին մեծ,
Վոր հայրենիքի ղեկը փառավոր
Իր պիւրկ, անսասան ձեռքերով բռնեց,
Յեւ գարձրեց ուրախ հայրենիքը մեր
Ու կյանքը լցրեց ծաղկով կենսաբեր.
Մենք Աշտարակում շնչում ենք ազատ,
Յերջանիկ կյանքի ոգը լիառատ:

1937

ԱՌԱՋՆՈՐԴԻ ՀԱՅՐԵՆԻՔՈՒՄ

1.

Դնացքը ահա ֆշաց, մոտեցավ,
Յեւ գրկախառնվեց Դորի քաղաքին.
Մեր յերգը վառման յեւով, հորդացավ,
Բարձրացավ սերը ջերմ ու կաթոգին:
Մենք թափով իջանք գնացքի գունից,
Մոտեցանք սիրով մի գեղ տնակի.
Տնակը լուսե, տեսքով հուզալից,
Հարթ ճակատի պես շողշողաց անգին,
Փայլվիլեց ներքո անմար արեի,
Հայացքը հառեց գալիք դարերին,
Վոր պատմի պայծառ սերնդից-սերունդ,
Թե ինչպես ինքը առավ շունչ, ծնունդ,
Թե ինչպես ծնվեց յերեխան իր մեջ,
Նման բազեյի, իմաստուն ու պերճ:
Թե ինչպես նրան յերգեցին թեթև
Գարնան ծաղիկներ, հովիւր սրաթև:
Թե ինչպես տեսավ մարտը գլուղացու,
Որենքը դաժան, բիրտ ու մահացու,
Ապա գոռ Բագուն, Սիւրբըրը անծայր,

Անապատները դաժան և անծառ:
Թե ինչպես Գորուց նա հասավ հպարտ:
Բոցաշունչ Մոսկվա, Կրեմլ խնդառատ:
Թե ինչպես վառեց լույսերը անդին,
Իր հայրենիքին, աշխարհին, կյանքին:

2.

Տնակը սիրուն հայացքով զեղզեղ,
Հիշողության պես կանգնել է այնտեղ:
Յեվ ամեն կողմից այցելող մարդիկ
Բերում են նրան վողջույններ անդին,
Քաղում են բերքը տնակից լուսե,
Թողնելով այնտեղ վառ յերգեր ու սեր:
Ահա այստեղ է խաղում յերեսան...
Գորին ել այսոր մի ժիր յերեխա
Դիմավորել է աշունքվա բերքին.—
Խնձորին, տանձին, խաղողին, յերգին:

3.

Արդեն յերեկոն իջավ քնքշազին,
Մենք ել նստեցինք տնակի կողքին.
Մոտեցան մարդիկ ճերմակած, ահել,
Յեռանդուն, աշխույժ և սրտով ջահել.
Յերջանիկ կյանքի ակունքը սրտանց
Սիրով եր լցրիլ աչքերը նրանց,
Վորոնց խինդը վառ, զեփյուռը անդին
Տանում եր սիրով մեծ առաջնորդին:
Փառք էյին տալիս նրանք սրտաթով
Ծառին պողարարձ, կյանքին բուրավետ:

Յեվ այսպես ուրախ Գորիից Մոսկով
Պարզ խոսում էյին առաջնորդի հետ:
Շուրջը յերգերը, աղմուկը անմար,
Ջեփյուռը ծաղկանց բույրն է վողողում,
Յեվ ամեն մի թուփ խշռում է վառման,
Ե՛լ չոր ծառ չկա կանգնած այս հողում:
Յեվ այսպես ահա զուգվել է Գորին...
Մենք ել նստել ենք տնակի կողքին,
Ջրույց ենք անում, ժպտում ենք խորին,
Գոհ այս քաղաքից, բերքից ու շողքից:
Իսկ տնակը ջինջ, վոր կանգնել եր պերճ,
Հանգստանում եր յերջանկության մեջ:

1937

ԷՄՔԱՅՆԸ ՔԵԶ, ԱՌԱՋՆՈՐԴ

Գեղեցիկ են ձորերդ, հայրենիք իմ փառավոր,
Լեռները քո վեհանիստ, հանդերը նարինջ,
Ունես զետեր հորդառատ, լճեր, ծովեր բլուրավոր,
Այվազովսկու նկարից հազար անգամ ջինջ:
Կանաչով ես պսակել լեռ ու անտառ, դաշտ ու դյուղ,
Աղբյուրներն են խոսում պարզ ամեն ծաղկի հետ.
Չկա քո մեջ ել մի ծառ, վոր լինի չոր, անպտուղ,
Ամեն մի թուփ քո հողում դարձավ բուրավետ:
Քո ծոցի մեջ յերջանիկ խինդը աճեց բերկրալից,
Ամբարները՝ լեփ-լեցուն բերբով են խնդում.
Կյանքը հարուստ ե, ուրախ... համայնական կենսալից
Բույրն ե մտել, դարդարել ամեն հյուղ ու տուն:
Քո ամեն մի այգու մեջ մարդը ապրում ե ազատ,
Ծառը ձեռքով ե անում, մեկնում բլուր զանձեր.
Մոռացել ե ծերունին իր մազերը ձյունապատ,
Նա շնչում ե յիաթոր, ջահել ե դարձել:
Ստալին, հայր դու հարազատ, արեգից ել վառ արեգ,
Վոր դարձել ես ուղենիշ յերջանիկ կյանքի.
Այդ քո լույսն ե հանճարեղ, վոր վառվում ե ծեղից-ծեղ,
Ու ցանում ե մեր յերկրում սերմերը անդին:

Այդ քո կամքն ե բոցակեղ՝ վոր տալիս ե լույսը մեզ,
Ու տանում ե մի ծաղկից մի ուրիշ ծաղիկ.

Այդ քո թափն ե լուսանորդ, վոր փռել ե ճոխ հանդես,
Յեղ բացել ե նոր կյանքի դուռը յերջանիկ:

Հայրենիքս մի ովկիան ե դարը մեր անխոնջ նավ
Փարոսներ ե վառել վառ, սլանում անահ.

Այնտեղ, ուր մահը յերեկ թե եր փռել տխրահար,
Հերոսները կերտում են յերջանիկ աշխարհ:

Ո՛վ, դու հզոր նավավար, արեգակ դու մշտավառ,
Հայրենիքիս ձայնի հետ զոչում եմ արթուն.

— Իմ ձայնը քեզ, առաջնորդ, յեթե կարիքը յեղավ
Կյանքս կտամ իմ յերկրի առաջին մարդուն:

1937

Ս Տ Ա Լ Ի Ն

Հանձնվեցի մաքրիս. հանկարծ անցյալի շվաքը անթեկ
Կանգնեցիմ առաջ... լսում եմ արդեն հաղը բանտերի...
Ահա դիմացս առաջնորդն ե մեր վեհ, պայծառազեմ,
Հայացքն ե հառել արյունոտ ու մութ այն հին աշխարհիս:

Տեսնում եմ կարծես ձեռքերը կապած մարդկանց
իրար քով,
Իսկ շուրջը նրանց արցունք ե թափում քանի անել
մայր.

Գոհարներն ահա Անդրկովկասի ալեծուփ ու խոով
Տոպրակներ ուսին քայլում են բորբոք դեպ աքսո-
ւավայր:

Ո՛ր, պառավ աշխարհ, ե քո սիրտը թեն թույնով սրբակ-
ված,

Սիրերը ձյունոտ՝ սառած աստղերի մի ժողովածու.

Յեվ բանտը մռայլ դռները յերկաթ անմեկին կողպ-
ված,

Վոր կանգնել ե ծուռ և իրեն, ասես, հսկա յե կար-
ծում:

* * *

Դու Լենինի հետ դարձար նոր կյանքի մեծ արվեստա-
գետ,

Մեկտեղ դարբնեցիք մտքերը Մարքսի բարկ, արեա-
ղուն...

Արդ կրեմլում ես դու և Հոկտեմբերի վորդուն լուսա-
վեղ

Նոր լույս ես տալիս շողավառ, վորպես արևի լեզուն:

Յեվ վորտեղ սովը նայում եր ազահ աչքերով տրտում,
Ուր մարդը բանտի շվաքի տակ եր թռչնում տխրա-
հար.

Արդ հերոսները յեղել են այնտեղ քո կամքը սրտում
Յեվ կառուցում են մի անզուգական, յերջանիկ աշ-
խարհ:

Իսկ յեթե մի որ ծանոթ սրերով թշնամին գազան
Յերևաց հանկարծ մեր հորիզոնում՝ պերճ և արևոտ,
Վոր արյունոտի հայրենիքը մեր, կյանքը սրբազան,
Յեվ մեր աշխարհը փորձի վարակի գործով իր կեղ-
տոտ,—

Այնժամ, առաջնորդ, կելնես դու հպարտ, վորպես մի
արծիվ,

Ամբողջ աշխարհին կկանչես ուժգին ձայնովդ կայտառ.
Յեվ ամեն կողմից, բոլոր վայրերից անպարտ ու ան-
թիվ

Կելնեն հուլավառ բանակներն ինչպես կենդանի ան-
տառ:

Կելնեն, կգրոհեն թշնամուն դաժան, նենգ և արնախում,
Յերկնում կապուտաչ կաղմկի ուժգին ձայնը սրբազան,

Վոր փոթորկի մեջ, մարտերում անշեջ ու հերոսական
Աշխարհը միին թափուր կոծող թափի, ընկնի ցիրու-
ցան:

Վոր քանդվի հիմքից այդ հին աշխարհի կապանքը դա-
ժան,

Վորտեղ ճորտերի գլխին ձմեռ է դեռ, թեկուզ և գար-
նան:

Թող այնպես թնդա թունդ թնդանոթի ձայնը անսասան,
Վոր մեր մարտիկի վեհ սրտի համար սեր, յեռանդ
դառնա. —

Վոր յերգի նա պերճ հայրենիքին շող և մետաքսազործ,
Մաքառի, զարկի ճեղքերին, ինչպես մուրճերը սալին...
Ջան, հայրենիքին փաղաքշում են միշտ հերոսները հոծ,
Վորոնց առաջից քայլում է հաստատ հանճարեղ Մտալին:

1937

ՔԵԶ, ԸՆԿԵՐ ԹԵԼՄԱՆ

Վարդե բթոցներ վարդերով լեցուն
Բերում են, գոշում՝ մենք միշտ պատրաստ ենք...
Դասակարգը քո՝ արևի լեզուն,
Ձի կարող մարի թշնամին յերբեք:
Ջարկում է մի սիրտ, աշխարհից-աշխարհ,
Կյանքին բերկրանքի լույսեր է կապում:
Յեվ այդ պայքարում բոցեղ, մշտավառ,
Ծեր, փռած ծառեր ընկնում են թափուր:
Սին աշխարհի դեմ պայքարը վառման,
Սեր, կյանք է տալիս քեզ, ընկեր Թեւման:

Բոցը չի այրի յերգը Հայնեյի,
Կամ բոցը բոցին վռնց պիտի վառի.
Նա կայծի նման կշողա ելի
Լույս կտա, կորով սրտերին արի.
Մեծ ժողովրդի սիրտը կլաոի
Յեվ կպսակի մարտերով անգին,
Վոր շողա զվարթ յերգը նոր դարի,
Լույսը խանդավառ, սերը կաթոգին:
Բոցերը մարտի ցուում են վառման,
Սեր, կյանք են տալիս քեզ, ընկեր Թեւման:

Վոր փոթորկի մեջ, մարտերում անշեջ ու հերոսական
Աշխարհը մթին թափուր կոճղ թափի, ընկնի ցիրու-
ցան:

Վոր քանդվի հիմքից այդ հին աշխարհի կապանքը դա-
ժան,

Վորտեղ ճորտերի գլխին ձմեռ է դեռ, թեկուզ և դար-
նան:

Թող այնպես թնդա թունդ թնդանոթի ձայնը անսասան,
Վոր մեր մարտիկի վեհ սրտի համար սեր, յեռանդ
դառնա. —

Վոր յերգի նա պերճ հայրենիքին շող և մետաքսագործ,
Մաքառի, զարկի ճեղքերին, ինչպես մուրճերը սալին...
Ջան, հայրենիքին փաղաքշում են միշտ հերոսները հոծ,
Վորոնց առաջից քայլում է հաստատ հանճարեղ Մտալին:

1937

ՔԵԶ, ԸՆԿԵՐ ԹԵԼՄԱՆ

Վարդե րթոցներ վարդերով լեցուն
Բերում են, գոչում՝ մենք միշտ պատրաստ ենք...
Դասակարգը քո՝ արևի լեզուն,
Չի կարող մարի թշնամին յերբեք:
Ջարկում է մի սիրտ, աշխարհից աշխարհ,
Կյանքին բերկրանքի լույսեր է կապում.
Յեվ այդ պալքարում բոցեղ, մշտավառ,
Ծեր, փռած ծառեր ընկնում են թափուր.
Սին աշխարհի դեմ պայքարը վառման,
Սեր, կյանք է տալիս քեզ, բնկեր Թելման:

Բոցը չի այրի յերգը Հայնեի,
Կամ բոցը բոցին վաճի պիտի վառի.
Նա կայծի նման կշողա ելի
Լույս կտա, կորսվ սրտերին արի.
Մեծ ժողովրդի սիրտը կվառի
Յեվ կպսակի մարտերով անգին,
Վոր շողա զվարթ յերգը նոր դարի,
Լույսը խանդավառ, սերը կաթոզին:
Բոցերը մարտի ցուում են վառման,
Սեր, կյանք են տալիս քեզ, բնկեր Թելման:

Իսկ դարձար յերկրիդ զբոլոր լուսե,
Բարբարոսի դեմ սրած մի դանակ.
Ավելի վեր ե միշտ ձգտում բաղեն,
Յերբ պարփակում ե նրան մի վանդակ:
Բեռլինը հիմա պատած գիշերով
Սպասում ե իր ջինջ առաջնորդին,
Յերբ ժողովուրդը կվառի սիրով
Յերգը մշտավառ՝ քո սրտին մոտիկ.
Սին աշխարհի դեմ պայքարը վառման,
Սեր, կյանք ե տալիս քեզ, ընկեր Թելման:

Իմ հայրենիքում գարուն ե ու սեր,
Ծառեր են կանգնել կանաչ, պտղաբարձ.
Ժպտում են չքնաղ ծաղիկներ լուսե,
Բուրմունքը թովիչ փուփիլ ե անսանձ,
Հույսով են վառվել ամեն հյուղ ու տուն,
Հայրենիքը իմ ցնծում ե անգին.
Ուր ամեն մի մարդ մաքառում անզուլ,
Արե ե վառում արևի կողբին:
Մեր յերգի նման անշեջ, լուսալի,
Բո յերկրում, Թելման, գիտեմ, կվառվի:

Թող այրեն գիրքը անմահ Հայնեյի,
Վառված յերգերը կենեն դեպի վեր...
Հերոսը բանառում հերոս կլինի,
Նրա սիրտը բոց թեկուզ ել գաղեն:
Վոջջույն ե տալիս ժողովուրդը մեր,
Բանտարկված քեզ պես քո ժողովրդին,
Վորի սիրտը մեծ դայրույթով լցվել,
Նեռ Հիտլերի դեմ զարկում ե ուժգին,

Զարկում ե, վառվում յերգերով վառման,
Սեր, կյանք ե տալիս քեզ, ընկեր Թելման:

Նզովք այն յերգչին, ով վոր վաճառվել,
Անձայն ե անցել Հայնեյի մոտից,
Ով իր պատիվն ու նամուսն ե ծախել,
Կանգնել ե դահլճ Հիտլերին մոտիկ:
Մի նոր Բեռլինը կգա, կվստվի,
Յեվ կպսակվի լույս այգաբացով.
Կյանքն իր յերջանիկ թեր կփոխի,
Ոժտված մշտավառ արևի բոցով:
Յեվ յերկիրը քո, քեզ նման վառման,
Ի՛ր դեկը կտա քեզ, ընկեր Թելման:

1937

ԱՐՅՈՒՆՈՑ ՀՈՂԸ

(ՎՐԱՅԱԿԱՆ ՖՈՒԿՆՈՐԵՑ)

Յերբ լուսինը՝ հեղանազ,
Փռեց արծաթ շող ու վարս,
Գորու կուրծքը փալկեց,
Վորպես զոհար ու ալմաս:

Կոշկակաբի տնակում
Լոկ մի լամպ եր աղստում,
Իսկ Սոսոն մոր գրկի մեջ
Բողբոջում եր ու յերգում:

Ապա խնդրեց մայրիկին՝
— Հերիաթ ասա դու մի հին,
Թե փոնց աղբատ մի տղա
Թռիչք գործեց սրտալի:

Կամ ասա, թե այն սարից
Շվին ինչ՞ի տխրալից
Յերգ ե հյուսում, հեկեկում,
Վիշտ ե բերում, մայր իմ, ինձ:

Մայրը մանկանը սիրով
Դրկեց ու հուր կարոտով
Խոսեց նա մեղմ ու հանգաբա,
Հերիաթ պատմեց նրան նոր:—

«Մեր աշխարհում տխրածեծ
Ամռան յերաշտը փովեց,
Անծալրածիր հանդ ու արտ
Դեղին գույներով ներկեց:

Սովը դռնից-դուռ անցավ,
Սրտին կպավ, վորպես ցավ,
Վարդը բլբուլին կարոտ,
Կսկոն մնաց, չորացավ:

Հեռու՝ ձորի յեղերքին,
Ապրում եր մի պառավ կին,
Իմաստալից խոսքերով
Խինդ եր բերում ամենքին:

Մարգիկ յելան, գնացին,
Պառավ կնոջ ասացին,
— Դարձան արա մեր ցավին,
Ոոված մեռանք, մնացինք:

Պառավ կինը խիստ հուզված
Յելավ վոտի և հանկարծ
Ասաց՝

«Հողը լվացեք,
Նա արյունով ե պատած»:
Հետո գնացին...»

— Հողն ինչ՞ի յե արնալից,
Մայր իմ, մայր իմ, ասա ինձ:

— Հարստի մոտ հացն է բոլ,
Քեք է անուժ ամեն ուր,
Աղքատը դառն ու զատարկ,
Շրջում, տնքում է մոլոր:

Տերը նստում է ճորտի
Վզի վրա ու մեջքին,
Թագավորը նենգամիտ
Լուծ է դնում ամենքին:

Մեր հանդերում դեղնադոծ
Միշտ լսվում է լաց ու կոծ.
Փաթաթվել է մեզ վրա
Մութ ամպը, վոնց մի սև ոճ:

Ահա, վորդիս, թե ինչու
Արնալից է հոդն ու ջուր:

1938

ԾԵՐԳ՝ ՍՏԱԼԻՆԻՆ

Քո միտքը կայծակ, աչքը բաղեյի
Մթին աշխարհի ավերն է քանդում...
Դու տվիր մարդկանց վեհ մեջքեր ժայռի,
Ուժը լեռնական, սուր աչքեր արթուն:

Դու տվիր կյանքին արևը անրիծ,
Սերը անթախիծ, յերզը հրաշող,
Քո արևից ե. վոր գուգվել են ջինջ
Պերճ հայրենիքիս և՛ ծաղիկ, և՛ հող:

Դու յերկրի վրա բացվեցիր զվարթ,
Ինչպես գարունը վա չքնաղ առավոտ,
Քո լույսի ներքո, քո շոգերի տակ
Կյանքը շողշողաց պերճ ու փառավոր:

Ու քեզ են բուրում և՛ նարգիզ, և՛ վարդ,
Քեզ, գարուն կյանքիդ, արևիդ լուսն.
Դու տվիր նրանց խնդություն ու կյանք,
Յեվ յերջանկություն, և՛ յերանգ, և՛ սեր:

Քեզ է նկարում սրնդի վրա
Հովիվը սեր նոր վառ սիրով անտակ,
Յեվ զվարթաձայն յերգերում նրա
Դու յես շողշողում, վորպես արեգակ:

Յեւ բաղեները ողում սավառնող,
Վեհ դյուցազները հողի ու հանքի,
Հյուսված արեին քո պայծառաշող,
Յերգում են անուշ սերն աշխատանքի:

Յերգում ե քեզ, հայր, կյանքը զվարթուն,
Բեզ, գարուն կյանքիդ արեիդ թովիչ.
Դու չքնաղ յերկրի ովկիան խնդություն,
Դու մեր սրտերի անցին ընակիչ:

1938

ՄԵՐ ՍԻՐԵԼԻ ՄՈԼՈՏՈՎ

Յերկմանի աչքի մեջ

Արեն իջավ հրաշող,

Մարդիկ մի նոր խինդ առան,

Փարթամացան ծիլ ու հող,

Յերբ վոր նրանց սրտերում

Խնդաց անուշ յերգի պես

Առաջնորդի զինակից

Մոլոտովի խոսքը վես՝

«Համաձայն եմ...» Դեկավար,

Խոսքդ վառման ու անչեջ,

Ծաղկանց բուրի նման պերճ,

Մտավ ամեն սրտի մեջ,

Մտավ ե՛ գուդ, ե՛ քաղաք,

Շրջեց անտառ ու փողոց,

Յերկմանի լեռներից

Մինչև Գոբիս վոսկեղոծ:

Ահա յեղավ հրճվանքով

Ժողովուրդն իմ հալկական,

Կրեմլի ապողին ե հասնում

Նրա յերգը հաղթական,

Յեւ, մի հզոր մարդու պես,

Գոչում ե նա կարոտով.

—Մեր ձայնը քեզ, կյանքն ել քեզ

Մեր սիրելի Մոլոտով:

1938

Մ Ա Վ Զ Ո Ւ Ն Յ

Մտեցա...

Սիրտս առեա կանգ առաւ,

Յեւ յիս փշաքաղ նայեցի տխուր:

Մեծ Հոկտեմբերի հայրը հրաւառ

Պառկել եր, ննջել մտասուլղ ու լուս

Սակայն նման չեր այս բունը յերեք

Առաջվա քնին, վոր ննջում եր նա,

Յերը զարթնում եր. վոնց հոգմը գոռ ու սեղ,

Աչքերը, վորպես արեգ հուրհուրան:

Նայեցի յերկար .. սիրտս մղկտաց...

Դուրս յեկա տրտում ու զառնաթախիծ,

Բայց մեծ Լենինի արևով ներկված

Մասկոթը շողաց ու գուրգուրեց ինձ:—

Տվեց սեր. յեռանդ, խինդ արեաներկ,

Ժպտաց զթառառ, մոր պես հարազատ,

Այստեղ եր քայլում Լենինը արեգ,

Աշխարհին տալով խնդու թյուն ու կյանք:

Յեւ ինչպես հանդիս նրա սիրտն անշեջ,

Ում անունը մեծ պայքար ե ու կյանք:

Նա հար կոչա մեր սրտերի մեջ

Վորպես մեր սրտի անդին արեգակ:

1938

ՀԵՐՈՍԱԿ ԱՆ

ԿՈՄՅԵՐԻՏԱԿԱՆ ԴԱՅԼՆԵՐ

Զիլ զարկենք թմբուկներ բյուր հազար,
Թող թնդա վողջ աշխարհ, տիեզերք,
Թող փռվի յերգը մեր դեպ հարավ,
Դեպ հյուսիս, արևմուտք, արևելք:

Սիրում ենք հայրենիքն անսասան,
Մեր պայծառ աչքի վառ լույսի պես,
Թող վռնան ֆաշիստները գաղան,
Մեջքը մեր ամուր ե սարի պես:
Մեր յերկիրն անձիր ե, անեղերք,
Կյանքը մեր՝ թովչազեղ մի մայիս,
Չենք տա ժանտ թշնամուն մենք յերբեք
Ծաղկազարդ մեր հողից վոչ մի թիզ:

Զիլ զարկենք թմբուկներ բյուր—հազար,
Թող թնդա վողջ աշխարհ, տիեզերք,
Թող փռվի յերգը մեր դեպ հարավ,
Դեպ հյուսիս, արևմուտք, արևելք:

Յերբ մեկնի թշնամին նենգամիտ
Մեր այգին դունչը իր արնախում,
Մենք վորպես մի հոգի ու մի սիրտ,

Կյարդենք նրան հենց իր հողում:
Մենք ջահել. կոմյերիտ՝ հաղթ ու սեզ,
Յերկնքում, ծովերում, ցամաքում,
Յերդվում ենք, Մեծ Ստալին, կլինենք
Ամրակուռ ժայռի պես միշտ կանգուն:

Զիլ զարկենք թմրուկներ բյուր—հաղար,
Թող թնդա վողջ աշխարհ, տիեզերք,
Թող փռվի յերգը մեր զեպ հարավ,
Դեպ հյուսիս, արևմուտ, արևելք:

1938

Հ Ե Ր Ո Ս Ն Ե Ր

Գիրքը թերթի,
Մատյանը հին և հաստակող,
Վորոնց մեջքին դարերն անթիվ
Նստել են լուռ,
Յեվ հիշում են կյանքը տխուր,—
Անցյալը հայ ժողովրդի:
Այսքան մարտիկ, այսքան գերող
Հերոսները մեր նոր դարի,
Այդ գրքերից զո՞րն և կարող
Մտարերի:

Հա՛, յեղել են իշխան, սարգար,
Թագավորներ—գող, անարգար,
Վորոնք հայ հին ժողովրդի
Նստել ելին ուսին, մեջքին...
Սակա՛ն այսքան հերոս համառ,
Կովող ուրախ կյանքի հաժար,
Միաձուլված, պայծառանուն...
Դեռ չի յեղել վոչ մի անգամ
Հայաստանում:

Հերոսները թռչում են վեր,—
Յերկրից—լերկիր,
Մտնում են բյուր գործարաններ,
Դաշտերն անափ ծով բամբակի,
Հանդերն անծիր դեղձան արտի,
Հորերն անհուն պղնձի, հանքի...
Յեվ հուզում են սիրտը յերկրի.—
Հայրենիքի:

Հանքեր են, կամ արտեր անծիր,
Խաղողի տեղ, թե բամբակի.
Զարկիր անխոնջ և հարվածիր,
Գործը հասցրու հաղթանակին...
Զփախչես դու գործի բովից...
Ինչպես սիրտը Չկալովի—
Զայվեց գործին.

Հայրենիքը միայն գործում
Բաժանում և հերոս կոչում:

Հերոսը միշտ քայլում և վես.—
Անափ արտում,
Հողի սրտում,
Յեվ գթառատ, անուշ մոր պես,
Գործին ժպտում.
Վարում և նա արև անշնչ
Իր սրտի մեջ,
Իր յերկրում պերճ...
Յեվ տալիս և խինդը կյանքին,—
Հայրենիքին:

Փառք այն մարդուն, ով մեր յերկրի
Սրտում թաղնված ճօխ հույսերին
Տվեց վառ խինդ, վոր նա բերկրի,

Շապիկ կապի պերճ լույսերի:
Յերջանկալիք, իմ չքնաղ վայր,
Քո հողի մեջ միշտ, սրեց-որ
Ծնվում և հաղթ ու խանդավառ
Հերոսի մոտ հերոսը նոր:
Ուրեմն փառք տանք առաջնորդին,
Վոր մեր սրտին, հողին, արտին,
Տվեց շունչը աշխատանքի,
Յերգը պալձառ ուրախ կյանքի...
Ուրեմն փառք տանք,
Առաջնորդին կյանք տանք,
Փառք տանք:

ՅԵՐԵՄԻԱՍ ԷՍԵՐԵՆԻՔԻՆ

Սեր—հայրենիք, անձիր ու լայն,
Կանգուն, ինչպես հսկա վեժ,
Ձի սասանի քեզ վոչ մի դայլ,
Թեկուզ վոռնա որ-գիշեր:

Քո լույս գրկում կանաչադարձ
Կյանքը զարնան թևի մեջ՝
Ծաղկում անհոգ, վորպես մի վարդ,
Ու ժպտում ե միշտ անշեջ:

Մենք՝ քո վորդիք, խիզախ բանակ,
Հյուսված քո լույս կյանքի հետ,
Ծաղիկներից հազար տեսակ,
Յերգ ենք հյուսում բուրավետ:

Վ Յեվ թե քո դեմ վոստիք չար
Պալքար մղի մի դաման,
Չենք տա նրան և վոչ մի քար
Քո հողերից սրբադան:

Բաղենների հայացքով սուր,
Կելնենք յերկինք, ամպն ի վեր,

Ու կթափենք կրակ ու հուր
Մեր թշնամուն նենգ ու նեղ:

Սեր—հայրենիք, ազատ ու լայն,
Դու աշխարհի լույս արեգ:
Մենք յերդվում ենք, վոր վոչ մի դայլ,
Ձի սասանի քեզ յերբեք:

1938

ՅԵՐԵՎԱՆԻ ԶԵՐԱՊԵՏՆԵՐ

Ռոալդն երբեք ծոցում սառուլցի,
 Խեղդվել ե ձյունի սարերի զրկում:
 Թե լսի այսոր դործը առնացի,
 Կվառվեն նորից հույզերն իր սրտում:

Ի՞նչպես իմանա այդ նորվեգացին,
 Վոր յերազը իր դարձած կյանք ու սեր,
 Յերբ բաղեյի պես թռան, խաղացին,
 Մեծ հայրենիքիս յերեք հերոսներ:

Այնտեղ, ուր անգամ աստղերն են մրսում,
 Նայում են իրար գունատ ու տխուր:
 Վորտեղ արջը մեծ, ճանկերով իր սուր,
 Սառույց ե պատռում, մրթմրթում ե խուլ:

Թռան... Յեվ կարմիր դրոշակի առջև
 Խոնարհվեց ահեղ տարերքը անգամ...
 Յեվ ապշեց այնտեղ մրթմրթող արջն ել,
 Յերբ տեսավ նրանց վեհ, հերոսական:

Արծիվն ե ողում թռչում, ման գալի,
 Դուք արծիվից ել հպարտ ու վառման:

Յեվ ձեզ եր նայում աչքը արևի,
 Վոր Կրեմլի միջից շողում ե անմար:

Սակայն ո՞վ կասի հերոս Ռոալդին,
 Վոր յերազը իր դարձավ կյանք ու սեր,
 Յերբ հայրենիքիս հույզերով անդին,
 Յուրտ Բեռն առան յերեք հերոսներ:

1937-38

ՈՂԱՅՈՒ ԱՂԶԿԱՆ

Ո՛, այնքան խիղախ թռչում ես ողում,
(Արեն ե քո դեմ շողերը մաղում).
Յերեսիդ ծիծաղ, բերկրանք ու խնդում,
Շուրթերիդ լույսե ժպիտն ե խաղում:
Թռչում ես կայտառ, թևում ես կրկին,
Կապույտն ես ճեղքում յերկնքի ծովում.
Նայտուն գեփյուռը կարոտով անդին
Քո վոգեկրակ վառ սիրտն ե թովում:
Թռչո՛ւմ ես, թռչում դու այնքան հպարտ.
Լողում ես յերկնի ծովերում լազուր.
Սևաչյա աղջիկ, սիրտս հրավառ,
Աղմուկով ու ժղին քեզ մոտ ե վազում:

Նայում ես ներքե: Յերկրում մեր թովիչ
Ժպտում են արտեր անծիր ու դալար.
Լցվել ես, լցվում մի հրապուրիչ,
Դյուրթիչ արտերի խնդությամբ վարար:
Մոտենում ես դու արևին լուսե,
Իմ կյանքի արև՛, իմ խիղախ մարտիկ.
Հնձում ես այնքան արեից վարսեր
Ու սիրտդ լցնում հույզերով մարտի:

Իսկ յեթե մի ուր հողմեր շառաչեն
Յեվ հնչեն վոգեր բորբոքուն մարտի.
Կեչես դու նորից, վորպես մի բազե,
Վոր կովես ինչպես նոր կյանքի մարտիկ:

Հիմա լողո՛ւմ ես, սուրում ես նորից,
Թևում ես կայտառ, վորպես մի թռչուն.
Ողաչու աղջիկ, աչքերդ թովիչ,
Տես, սիրտս ել անա քեզ հետ ե թռչո՛ւմ:

1950

ԿԱՐՄԻՐ ՎԱՐԴԸ

Ծաղիկների մեջ գուզված, դարդարված,
Յես մի վարդ տեսա ալվան թերթերով,
Գարնան մեղմանուշ հովերով տարված,
Նազում եր նա հեղ, խաղում ժպտալով:

Յես մի վարդ տեսա սիրտը ի շաղով,
Ժպտում եր սրտանց և այնքան անուշ.
Ու նայեց նա ինձ մի լույս ծիծաղով,
Ասես վառ խոսքեր ասաց քաղցրաշունչ:

Ծաղիկների մեջ ննջեցի մի պահ,
Ու յերազեցի յես նրա մասին.
Շուրջս գուզվեցին ալ վարդեր այնքան,
Ցեղ ինձ սփռվիչ նոր յերգեր ասին:

Մո՛, այստեղ եր, վոր թշնամու ձեռքով
Ընկավ այն տղան՝ ընկերն իմ անդին,
Ու նրա արնով, արեշող յերգով
Բացվել է ահա այդ վարդը կարմիր:

1936

ԿԱՐՄԻՐ ՊԱՀԱԿԸ

Ամպերն են գոռում, յերկինքն է մթնել,
Անձրեն է անվերջ լալիս ու լալիս.
Կարմիր պահակը սահմանում կանգնել,
Նայում է հեռուն, զխում անհանգիստ:

Մշտաթիուն, վորպես սրտես բաղե,
Կարմիր սահմանը հսկում է նա լուռ.
Բորբ սրտում այնքան խնդություն ու ուր,
Արև է վառվում աչքերում լազուր:

Իսկ յեթե մի ուր շառաչեն տանկեր,
Մըրիկներ յելնեն յերգերով մահվան.
Կշարդի մոլի թշնամու զնդեր,
Հպարտ կնայի յերջանիկ վաղվան:

Արդ՝ հրացանը սեղմել է ձեռքում...
Իսկ զբոսում մեղմիկ անձրեն է յերկու մ...

Ի Ս Պ Ա Ն Ա Կ Ա Ն

Նա տուն դարձավ պատերազմից
Հուզավառված, անհաղթ ուժով,
Աչքերում իր կայծը ռազմի,
Բարկ սրտի մեջ կրակ ու շող:
Յեվ մոտեցավ հիվանդ իր մոր
Ու փաթաթվեց սիրով վաբար,
Ապա հարցրեց սրտաբորբոք,
Թե կնոջս վորտեղ տարան:

Մայրը վորդուն գրկեց սիրով,
Ապա սրբեց աչքերն իր թաց.
— Ե՛խ, վորդի ջան, արեաղոր,
Մեր խրճիթին վիշաք տեղաց.—
Գընալուդ պես յեկան հանկարծ
Փաշխտները այն արնախում,
Յեվ կնոջդ ձեռքը կապած
Տարան, բայց, ա՛խ, չգիտեմ ուր...

Այսպես առաց մայրը վորդուն,
Յեվ համբուրեց, գրկեց կրկին.
Աչքերը իր ջուր են հորդում,

Գալարվելով զվարթ դեմքին:
Համբուրելով նորից-նորից,
Ուղարկում ե վորդուն ճակատ.
Վստահ նրա հպարտ ուժին
Յեվ Մադրիդի բերդին անհաղթ:

Մի պահ վորդին կանգնեց մոռյլ,
Շուրջը գիտեց հայացքով սուր
Կարծես նորից լսում ե նա,—
«Տարան, բայց, ա՛խ, չգիտեմ ուր»:
Աչքերի դեմ շողաց կայծակ,
Գրկին գրկեց հիվանդ իր մոր.
Ապա նետվեց նորից խրամատ,
Խավարի դեմ լույսը՝ գինվոր:

1937

Ի Ս Պ Ա Ն Ա Ն Ա Ն

Նա տուն դարձավ պատերազմից
 Հուզավառված, անհաղթ ուժով,
 Աչքերում իր կայծը ուղղմի,
 Բարկ սրտի մեջ կրակ ու շող:
 Յեվ մոտեցավ հիվանդ իր մոր
 Ու փաթաթվեց սիրով վաքար,
 Ապա հալոցքեց սրտաբորբոք,
 Թե կնոջս վորտեղ տարան:

Մայրը վորդուն գրկեց սիրով,
 Ապա սրբեց աչքերն իր թաց.
 — Ե՛խ, վորդի ջան, արեազոր,
 Մեր խրճիթին վիշաք տեղաց.—
 Գընալուդ պես յեկան հանկարծ
 Փաշխատները այն արնախում,
 Յեվ կնոջդ ձեռքը կապած
 Տարան, բայց, անխ, չգիտեմ ուր...

Այսպես ասաց մայրը վորդուն,
 Յեվ համբուրեց, գրկեց կրկին.
 Աչքերը իր ջուր են հորդում,

Գալարվելով զվարթ դեմքին:
 Համբուրելով նորից-նորից,
 Ուղարկում ե վորդուն ճակատ.
 Վստահ նրա հպարտ ուժին
 Յեվ Մադրիդի բերդին անհաղթ:

Մի պահ վորդին կանգնեց մոռյլ,
 Շուրջը գիտեց հայացքով սուր
 Կարծես նորից լսում ե նա,—
 «Տարան, բայց, անխ, չգիտեմ ուր»:
 Աչքերի դեմ շողաց կայծակ,
 Կրկին գրկեց հիվանդ իր մոր.
 Ապա նետվեց նորից խրամատ,
 Խավարի դեմ լույսը՝ գինովոր:

1937

ՄՈՐ ԽՈՍՔԸ

Արի, վորդիս, անուշ բալաս,
Արի, գգվեմ, համբուրեմ,
Վաղը պիտի բանակ գնաս,
Արի կրժքիս՝ համբուրեմ:

Վեր կաց, այ մարդ, վեր կաց, գնա,
Ծանոթներիդ տունը բեր,
Տղեդ կարմիր բանակ կերթա,
Մի քեֆ անենք ես գիշեր:

Ահա յեկան զուգված անուշ՝
Ընկեր, ծանոթ, բարեկամ,
Հարսն ե տղին աչքով անում
Ու ժպտում ե դուրեկան:

Քեֆ են անում... ամբողջ գիշեր
Բաժակներ են շուռ տալիս,
Հոր սրտի մեջ՝ անհուն մի սեր,
Մայրն ե ցնծում, պար գալիս:

Ու յերբ շողաց այգը վառման,
Մայրը նորից ու նորից

Գրկեց վորդուն սիրով անմար
Ու շշնջաց սրտալից.—

— Գնա, վորդիս, անուշ բալաս,
Գնա բանակ դու սիրով,
Ծամբեդ լինի կանաչ ու խառ,
Դու յեղ՝ խիզախ մի գինվոր:

1038

ԿՈՄՇԵՐԻՏՈՒՀԻ

Այնքան խնդուն, և այնքան վառ,
Յեւ աչքերով կապտալիճ,
Սիրով յեկավ համագումար
Մի կոմյերիտ՝ ժիր աղջիկ:

Վարսեր ուներ պայծառ գիշեր,
Հույս աչքերում՝ աստղեր պերճ.
Կրեմլի աստղից խինդ եր իջել
Ու նստել եր սրտի մեջ:

Յեկավ խնդուն, յեկավ ժպտուն,
Վառված սիրով նոր կյանքի,
Ուժն եր հոսում բոցեղ սրտում՝
Համայնական շեկ արտի:

Ասանց հպարտ, ասանց զվարթ,—
— Կյանքը ուրախ և դառել.
Սիրտս վորպես զարնան մի վարդ —
Անափ վառ խինդ և առել:

Ժպտաց թուլիչ: Կրկին գերեզ
Խոսքեր ասաց սրտագին.
— Կերթամ նորից, վորպես հերոս,
Նոր խինդ կտամ նոր կյանքին:

Իսկ իմ սիրտն էլ ուրախ թնդաց,
Շողաց յերգիս բերքը ջինջ.
Յերգս էլ, սիրտս էլ միշտ քեզ կտամ,
Հերոսուհի, վարդ աղջիկ:

1936

Գ Ե Ղ Զ Կ Ա Կ Ա Ն

Մի կոմյերիտ յար ունեմ,
Յար ունեմ, սեզ սար ունեմ,
Սրտիս սիրո խորքի մեջ
Մշտականաչ ծառ ունեմ. —

Ազիզ յար ես դու,

Հսկա սար ես դու,

Սրտիս խորքի մեջ

Կանաչ ծառ ես դու:

Ազիզ յար ջան, սուր կերթաս,
Կարմիր բանակ հուր կերթաս,
Թշնամու դեմ զազազած,
Վորպես սրած սուր կերթաս. —

Յար ջան, բույր ես դու,

Անշեջ հուր ես դու,

Թշնամու վզին

Սրած սուր ես դու:

ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ՀԱՅԱՍՏԱՆ

Հողդ մնաց անմշակ, վարդդ թռչնեց կրծքիդ վեա,
Սև ամպն եր քեզ փաթաթվել, սև ամպը՝ սև ոճի պես,
Ազոավները, Հայաստան, թուենոտ որեր բերին քեզ. —
Բյուր մայրերը քո անըուն,

Արշավներից շառաչուն,

Դեմքով դալուկ, տխրակեզ՝ դարձան չվող մի թռչուն, —
Արաբական ճամբեքում, Հոռմեական հողի մեջ
Նրանք տվին գերեզման զավակներին իրենց պերճ,
Վորոնք վռչինչ չստացան բացի անից ու մահից
Հին չարագուժ ու խավար տիրանների աշխարհից...

* * *

Յեվ ամպի դեմ վեր յելած՝ զուռ հողմերում հոնդուն,
Արծիվներդ ծնվեցին, — դյուցազնները քո խնդուն,
Նրանք հրով բռնկված մեծ Ստալինի լուշսի տակ
Քո լեռներում բարձրանիստ վառեցին հուր արեգակ,
Արագածի ճակատին, ծագած արևի նման,
Ծածանեցին Լենինի դրոշը սեզ, հուրհուրան,
Վորի ցնծության ներքո, դարձած մի շունչ, մի վոգի,
Բյուր խարույկներ վառեցին,

Վոր ամպը սև չչոզի:

Բո լեռների վրա պերճ, այգիներում քո անգին,
Ուր ծաղկում ե խնդություն վառման սրտից արեգի,
Այն արեգի, վոր Կրեմլից վաղ առավոտ ե ժպտում,
Ու հորդում ե լույսը ճոխ ժողովրդի ծով սրտում:

* * *

Հիմա, իմ պերճ հայրենիք, իմ աչքի լույս, դու իմ
սեր,
Ֆերագներդ դարավոր, վորպես գարնան ծաղիկներ,
Շողշողում են կրճրիդ մեջ, ժողովուրդիդ պես խնդուն,
Ու բուրում են լի կյանքով քո ամեն մի հյուղ ու տուն:
Լույս ե տալիս քեզ այսոր որենքը մեծ, վոսկեգիր,
Անհուն սիրս ու կյանքի արեգակը այդ անգին,
Վորի զրկում վոսկե եջ,

Վորի պայծառ սրտի մեջ

Շողշողում ե կենսալից առաջնորդի լույսն անշեջ:
Ու հորդում ե խինդ ու հույզ, ու վառում ե սեր ու
լույս

Այգիներում քո չքնաղ,

Վորտեղ վողկույզ առ վողկույզ

Բարձրանում եմի նոր կյանք ու ցնծում ե յերգն անգին,
Յեվ բուրմունքն ե յեղնում վառ, բուրմունքը ծով
բերկրանքի:

* * *

Ով մեզ տվեց խնդություն, ով տնկեց նոր վարդ ու ծառ,
Ով բուրմունքով թովչագեղ վողողեց մեր հանդ ու սար,
Յեվ մեր կյանքին՝ հինավուրց տվեց յեռանդ, յերգ ու
սեր,

Մեր սրտի մեջ խինդ ցանեց, ծագկով պատեց հողը
մեր,
Կանգնենք նրա շուրջը մենք, ինչպես պատը յերկաթե,
Փառք տանք նրան շողշողուն, կյանք տանք նրան,
սիրտը մեր...

* * *

Խորհրդային Հայաստան, ժողովուրդք իմ հաղթ ու վեշ,
Վառման սիրտը արեգի կյանք ե տալիս հիմա մեզ,
Այն արեգի, վոր Կրեմլից, վորպես մեծ հայր շողշողուն,
Լույս ե ցանում, սեր ու խինդ մեր հանդերում, մեր
հողում:

Փառք տանք նորից ու նորից, կյանք տանք նրան,
սիրտը մեր,—

Մեր Ստալինին գթառատ, մեծ արեին լուսաբեր,
Վոր հայրենի հողը մեր ցնծա նրա լույսի տակ,
Վոր միշտ շողա մեր զլխին Ստալինը՝ վեհ արեգակ:

1938

Վ Ր Ա Ս Ց Ա Ն

Ահա յերկիր, ուր ծառ չկա անպտուղ,
Ուր շողում են լույսերը դառ, ժպտերես.
Յերկնի վրա արև, աստղ ու մառախուղ,
Ու յերկնի տակ ծաղիկների ճոխ հանդես:

Քրիլիսու մեջ լույսը անշեջ Զագեսի,
Ու ճակատին ժպտում է վառ այգաբաց.
Նա յելի է արևի դեմ հանդեսի,
Արևի դեմ՝ արևի պես կուրծքը բաց:

Կախեթը կեզ յերգն է պարզել խաղողի,
Ու ցնծում է, շողշողում է Կոլխիդան.
Ռիոնգեսը թող յերգերդ վողողի,
Թող աննման գովքդ ասի, Վրաստան:

Ինչքան հույզեր, ինչքան լույսեր շողացին
Քո սրտում պերճ, քո գրկի մեջ վոսկեղեն,
Ջան, յերգերդ խնդությունով մի անձիր,
Յեվ շողում են, շողշողում են կենսաբեր:

Ահա յերկիր՝ ծառեր, ծառեր պտղաբարձ,
Ուր ծփում է, ուր ծափում է խնդություն.
Սրտում ունի վորքան հույզեր, յերգ ու գանձ,
Ու կրծքում վառ չքնադագեղ բնություն:

Յ Ե Ր Ե Վ Ա Ն

Յերեվան, դու ժպտերես,
Կյանքդ յեկում է, յեռում,
Ու բուրավետ վարդի պես,
Վորքան սրտեր ես գերում:
Յեկում ես դու խանդավառ,
Արևի վարսն ես քաղում,
Արևի սրտի պես վառ,
Կուրծքդ է անուշ ծիծաղում:
Քո լույսերն են շողշողում,
Նարինջի պես վոսկեփայլ,
Բարկ արևը կարոտով
Քեզ գրկել է, վորպես մայր:
Յեվ քո կամքը ծաղկավետ,
Ջանդվի նման կարկաչուն,
Դարնան սիրուն ծաղկանց պես
Քո կուրծքն է հար կանաչում:
Քո լույսերը ջինջ յերկնի
Աչքերի պես լուսազին,
Կարծես իջել են աստղերն
Ու նստել են քո կրծքին:

Փողփողում ե սիրտդ սեզ-
 Արևի սրտի ներքո,
 Վորպես փառքի մի վառ յերգ,
 Կուրծքդ ե յեղնում բորբ յերգով-

Քո զրնգուն յերգի տակ
 Հիշում եմ յես մի անթով
 Դաշնակցական քաղաքի
 Կուրծքը վորպես մանվան դող-

Հիշում եմ, դու չեմ հիշում,
 Փողոցի խենթ մշուշում,
 Ինձ պես վորքան մանկիկներ
 Նետվել եյին վորպես շուն-

Մեր աչքերը խանդավառ
 Ու մեր կամքը հարածուն,
 Այսօր վորպես կովի յերգ,
 Քո գրկում ե շառաչում-

Յերեվան, դու կրակոտ,
 Յերգդ կիդիչ արևոտ-

Շողջողում ե կրծքիդ մեջ
 Մի վոսկեղեն առավոտ-

Կանգնել ես դու վոգեշունչ,
 Արևի դեմ կուրծքդ բաց-

Ծաղկափունջ ես կազմել դու-
 Արևի սրտի առաջ-

Ծիծաղում են վոսկեվարս
 Քո արտերը առվի մոտ,
 Յեվ արտերում խանդավառ
 Հրաշուշան առավոտ-

Դուրս ենք գալիս մենք արթուն-

Ծով արտերում վոսկեխինդ,
 Յեվ յես, և նա յեռանդուն,
 Յեվ յես, և նա կոմյերիտ-

Յերեվան, դու լուսափայլ,
 Կարկաչում ես Չանգվի պես,
 Կամքդ ե յեղնում թովյանքով,
 Վարդերի պես ժպտերես-

Քայլեր, յերկիր, յերգիւր վառ
 Առավոտից-առավոտ,
 Ձուլվել են քեզ հուզավառ
 Մեր սրտերը արևոտ-

1936

ԽՆԴՈՒԹՅՈՒՆ

1.

Սրտիս մեջ ամառ ե հասուն,
Ամառ ե, և խինդ ե, և սեր,
Մեր կյանքը նոր յերգ ե ասում,
Ու յելնում, վառում ե լույսեր:
Այնքան վառ յերգ կա իմ սրտում,
Այնքան վառ յերազներ անգին,
Մանկան պես՝ ապրում եմ խնդուն,
Ո՛ր, յես մի մանուկ եմ կրկին:

2.

Ո՛հ, սիրտ իմ, յերգում ես անուշ,
 Վառվել ես հրով նոր կյանքի,
 Արբել ես գինով քաղցրանուշ,
 Ու լցվել յերգերով անզին:
 Կոփվել ես, վառվել ես, զխանձ,
 Նոր կյանքի հորձանքում հրկեղ.
 Արեւ մեր այս փոսկեղեն
 Շոյում ե քեզ անուշ՝ մոր պես:

3.

Նորից ծալտում ես, սիրտ իմ վառ,—
 Ծաղկի պես, վարդի պես կոկոն.
 Կարկաչուն աղբյուր ես զուլալ,
 Լցվել ես պարթարի վոզով.
 Զուլվել ես մշտավառ մարտին,
 Պայքարին մեր այս հարածուն.
 Յեվ ահա քո դեմ նոր կյանքի
 Դալար զարունն ե կարկաչում:

4.

Ո՛, կյանք իմ, յերկնի տակ լազուր
Յերգիր, դու լուսե առավոտ.

Սիրտս ել ե քեզ պես սիրասուն,

Սիրտս ել ե քեզ պես փառավոր:

Այնքան սեր, խնդության գրգիռ,

Այնքան վառ յերազներ քնքուշ.

Ո՛, սիրտ իմ, մանուկ ես կրկին,

Մանկան պես ապրում ես անուշ:

1938

ԳԱՐՆԱՆ ԾԱՂԻԿՆԵՐ

ԴԱՐՆԱՆ ԾԱՂԻՆ

(Լուիզա Մուրֆայանին)

Փայտում ես դու մեղմ ու թեթև,
Վարդի նման ես ծաղկում.
Թովում ես, ինչպես թիթեռ,
Խինդ ե իջել քո հոգում.
Փոքրիկ ես դու, բայց տես, արդեն
Խնջքան սիրտ ես բարբոքում:

Մեր ջրերի կարկաչի պես,
Ծիծաղում ես ու խնդում,
Աչքերիդ մեջ կակաչ ունես
Ժպիտներով զվարթուն,
Բո հայացքում վառ, լուսերես,
Գալիք կյանքն եմ յես կարդում:

Աճում ես ու պայծառանում,
Յեվ ցնծում ես խնդասիրտ.
Նոր կյանքը քեզ աչքով անում,
Տալիս ե յերգ, սեր ու խինդ,
Վոր մեծանաս պայծառանուն
Ու դառնաս միւր կոմիերիտ:

Յեվ յերբ ուրախ կմեծանաս,
Հասակ կառնես չինարի,
Յերջանկությամբ կշողշողաս,
Կժպտաս պերճ ու արի.
Կգուրգուրեմ մազերդ խոս,
Կհամբուրեմ սրտայի...

Աճում ես ու ժպտում թեթև,
Յերկրիդ հետ ես դու ծաղկում,
Թովում ես դու ախրան սրտեր,
Ուրախ, յերջանիկ կյանքում,
Քո աչքերում, մի տես, արդեն
Գալիք որերն եմ կարգում:

1037

Ե Ա Ղ Ի Կ Ն Ն Ր

Սիրտը լցված ցող ու շաղով,
Վառ ծաղիկներ գետակի մոտ
Մեղձ գեփյունին թևը տալով
Բույր են սփռում անուշահոտ:
Մանկիկներ են նրանք կայտառ,
Հուսափրփր ու կրակոտ,
Արշալույսի նման պայծառ,
Ժպտում են վառ և փառավոր:

Մանկիկներ են նրանք սիրուն,
Կուրճը լցված անուշ շաղով.
Ծրձաղում են, փորպես առու,
Գարնան հովի աշխուժ խաղով.
Նրանց անուշ աչիկներում
Խինդ և վառվում լուսե շողով,
Յեվ ամբացած ձեռիկներում
Հույզ և յեխում զվարթ տաղով:

Նրանք մի որ դրոշը ձեռքին
Պիտի յեկնեն, վոպես մրրիկ.
Յեվ անառիկ բերդերի դեմ

Պիտի կովեն, վոնց կոմյերիտ,
Պիտի կովեն, և ժպտեբեռ
Պիտի բերեն կյանքը խոստուն
Մալիսյան ալ վարդերի պես,
Ամուսն նման վառ ու հասուն:

Տեսեք, տեսեք ցող ու խաղով
Գարնան յիրուն ծաղիկները,
Լցված իմ նոր յերկրի տաղով
Նրանց վստման թերթիկները.
Մանկիկներ են նրանք աշխուժ,
Կուրծքը պահած արևի դեմ,
Արևի պես այնքան անուշ,
Սրտում ունեն լույսեր ու սեր:

1035

* * *

Մանկիկ, չես տեսել հին կյանքը դեղին,
(Նման եր աշնան տերեխն վտիտ).
Այսոր հանդերը վարդերով հղի,
Աչքերիդ նման ժպտում են վճիտ:

Գիշերը լույս է, ցերեկը անուշ,
Հայրենիքիս պես աճիր դու, մանուկ:

1036

ՈՐՈՐՈՅՆ ՅԵՐԴԸ

Որոր բալաս, նանի-նանա,
Ննջիր անհոգ, անձայն,
Շուրջը՝ զարուն, դու իմ լալա,
Կյանքը՝ արե պայծառ:
Ընտանիքիս խինդ ե իջել,
Սրտիս խորքում՝ լուսին,
Ննջիր, բալաս, իմ կյանք ու սեր,
Դու իմ լիալուսին:
Հայրենիքս վարդ ե ասես,
Հուզված ծաղկանց զարդով,
Ննջիր յես քեզ որոր կասեմ,
Հայրենիքիս հանդով:

Քնիր բալաս, որոր-շորոր,
Ա. քերդ նույ, լուսե,
Քեզ ե նալում արեաշող
Կրեմլի հպարտ Բաղեն:
Դու յեր անիկ յերկրի վորդի,
Չո. նես արցունք ու դարդ,
Վոր մեծանաս, առաջնորդ:

Տուր պերճ ծաղիկ ու վարդ,
Յեվ ասա՝ հայր, քո վառ ծառի
Յես մի ճյուղ եմ դալար.
Քեզ եմ բերել, քեզ եմ տալի
Սիրտս սիրով վարար:

Որոր բալաս, նանի-նանա,
Ի՜նչ ասողալից զիշեր.
Ննջիր անուշ, դու իմ լալա,
Շուրջ զարուն ու սեր...
Հայրենիքդ վարդ ե ասես,
Զուգված ծաղկանց զարդով.
Ննջիր, յես քեզ որոր կասեմ
Հայրենիքիդ հանդով:

1938

ՊԵՌՆՆԵՐՈՒՀՈՒՆ

Սև-սև վարսեր ունես, վորպես ամռան գիշեր,
Աչքերիդ մեջ յերկու բոցեղ գտրուեն.
Այդ քո փոքրիկ սրտին խնդություն ե իջել,
Ու ցնծությամբ մի նոր լույս ես վառում:

Վզիդ կարմիր փողկապ, ինչպես կարմիր մի վարդ,
Շողշողում ես դու ել, վորպես ծաղիկ.
Սրտիդ խորքում կրկին կարկաշում ե զվարթ
Մեր յերջանիկ կյանքի կարմիր գալիք:

Շուրջ յեյնող յերկիր, շուրջ յերգեր ու սեր,
Դու աճում ես յերկրիս բոցերի մեջ.
Յե՛վ ժպտում ես անուշ, յե՛վ յերգերով լուսե
Թափում ես դու կյանքը սիրով անշեջ:

Յերբ նայում եմ քո այդ լույս աչքերին զերող,
Կյանքն ե յեյնում իմ դեմ կրկնապատիկ.
Լցվի՛ր կովի վոզով ապագայի հերոս,
Գալիք լուսե կյանքի անխոնջ մարտիկ:

Արե աչքեր ունես, մազեր թովիչ գիշեր,
Դու դարձել ես յերկրիս սիրուն ծաղիկ.
Այսոր քո բարկ սրտին խնդություն ե իջել,—
Մեր յերջանիկ կյանքի կարմիր գալիք:

ՄԻ ԲԱՆԻՆԻ

Այնպես ուրախ, այնպես զվարթ
Այնպես անուշ խաղում ես դու,
Հակաեմբերյան արևի տակ
Այնպես աշխուժ աճում ես դու:
Յե՛վ ժպտում ես, ե ծիծաղում,
Յե՛վ նայում ես հեռու, հեռուն,
Յե՛վ յերկիրն իմ այս քաղցրանուշ
Քեզ յուսեցնես խի՜նդ ե ընթում:
Վզիդ կարմիր, կարմիր փողկապ,
Ալ վարդի պես բացվել ես դու,
Մեր այս յերկրի արևի վառ
Հուր շողերով լցվել ես դու:
Դու ժրջան, զվարթաձայն
Յե՛վ զանգրահեր անուշ մանուկ,
Մեր այս կարմիր յերկրի նման
Աճում ես դու, պայծառանում:
✓ Այնպես զվարթ ժպտում են վառ
Բո աչքերը շինջ առավոտ,
Առավոտվա նման պայծառ
Ժպտա սիրուն ե արևոտ:
Վոր մեծանաս ե ամրանաս,
Արևի պես խնդաս լուսե,
Դառնաս կովի կարմիր զինվոր,
Վոր գալիքի կյանքը հյուսես:

* * *

Փշրվեց բարձր սարի վրա
Բորբ արեւի վոսկե թասը,
Հորիզոնը կարմիր քուրա,
Կարծես շողշող, վառ ալմաստ ե-
ժպտաց թովիչ և ծիծաղկոտ
Վոսկե թասից թափեց զինի...
Մանկիկ, վոնց այս առավոտը,
Թող քո սիրտն եւ մաքուր լինի-

1936

ՅԵՐԳԻ ԱՐՔԱՆԵՐ

ԾԱԿԱՆԻ ԳՈՐԿՈՒ ՀԻՇԱՏԱԿԻՆ

Այս առավոտ արևը բորբ
Սև ու մթին զգեստ հագավ,
Ու լաց յեղավ, ու լաց յեղավ,
Ու շուրթերին ժպիտ հագավ,
Ապա սգի յերգեր ասաց
Կյանքի պայծառ, պայծառ շողքին,
Յեվ մահ գոժեց, վոր ել չկա
Բազմարանքար Մաքսիմ Գորկին,
Ո՛ր, վնչ, արե, նա շատ կապրի
Սերունդների անխոնջ յերթում,
Քանի դու կաս լույս աշխարհում,
Քանի դեռ մարդ կյանքն ե հերկում,
Յեվ վորպես մի մրրկահավ
Նա նորից վե՛հ կշառաչի,
Ու կձուլվի րարկ յերգերով
Գալիք կյանքի հորդ կարկաչին,

ԵՈՒԹԱ ՌՈՒՍԹԱՎԵԼՈՒՆ

Տուր ազատուն աղքատներին, ստրուկներին՝
ազատութիւն,
Յաղքեն նրանք ու կնիշեն, և կտան ինձ մըջ
որհնութիւն.

Շորա Ռուսթավելի

Յերգի վարպետ, պերճ յերգերով բաց արեցիր չքնադ
հանդես,
Ո՛վ արեգակ, դու շողացիր ժպիտներով պայծառատես,
Ու մնացիր բուրումնավետ վրաստանի վարդերի պես՝
Գուլնով փայլուն, տեսքով սիրուն, ճաճանչազույն և
լուսերես:

Երտերի մեջ չես թառամել, յեղել ևս միշտ կանաչ մի
ծառ,
Ֆիրդուսու պես, տարիների և դարերի զլխով անցար,
Հասար մինչև որերը բոց, արեւ մեր տեսքով պայծառ,
Վոր նույն հանգով, արփու նման, դարեր անթիվ
շրջես զարձալ:

Քանզի հիմա զարը շողաց յերջանկավետ, անզուգական,
Սերունդը նոր թաղեց անհետ ամեն տեսակ լաց ու
կական:

Ջերմ գգվում ե ու գուրգուրում ժողովուրդը հերոսա-
կան

Պերճ յերգերիդ պայծառաշող, իմաստուն և անմահական:

Հայրենիքում լեր վառվում ե նոր արեգակ, նոր սեր,
նոր խինդ,

Վատը լավով փոխվում ե հար բանակը մեր Վաղրե-
նասիրտ:

Վոսոխը նենգ եւ չի կարող փռել մեր դեմ սարսափ
ու վիշտ,

Յերբ վոր մեր մեջ ամեն մի մարդ լույսով արբում,
զինվում ե միշտ:

Աշխատանքը դարձավ մեզ փառք, սերը՝ անափ ուրա-
խութիւն,

Արևը մեզ աչքով անում, ցնծում ե մեր ճոխ բնու-
թիւն.

«Արդեն տվինք աղքատներին, ստրուկներին ազատու-
թիւն»,

Յեւ քեզ, Շոթա, յերջանկությամբ տալիս ենք խինդ
սիրով անհուն:

Մեծ իմաստուն, սիրում ե քեզ հայրենիքս չքնադա-
դեղ.

Անմահության պսակ դրեց գոհարներիդ վին, հանճա-
րեղ.

Ջան, վորպես մի բարկ արեգակ, ճաճանչում ես ա-
մեն մի տեղ,

Չափածոյի հորիզոնից շողքն ես հորդում պերճ ու բո-
ցեղ:

ԹՈՒՄՆԵՐՆԻ ՀԵՏ

Յերբ լիռան գլխին արեւը յեւով
 Յեւ վոսկեղոծեց հանդ, անտառ ու ձոր,
 Տեսա շողալառ գազաթյն լեռան
 Լոռվա պոեան եր նստել փառավոր:
 Նստել եր, նայում ծանօթ ձորերին,
 Լսում Դերեղի աղմուկը՝ վաշ վաշ:
 Ու միտք եր անում, թե մուտք ուրերին
 Զոհ յեւան քանի Սարո ու Անուշ:
 Մտեցա նրան, ասացի՝ վարպետ,
 Դու յերկու դարի արանքում հանգար,
 Զտեսար Լոռվա կյանքը ծաղկավետ,
 Յերբ լեռները բո կանաչ շոր հաղան:
 Զտեսար, ինչպես Սարոն ու Մոսին
 Յեղբոր պես իրար Ժպտացին սրտանց,
 Ու յերբ «Անուշ»-ն են կարդում միասին,
 Զարմանք ե պատում սրտերում նրանց:
 Շուրջը ցնծություն... անտառը խշշաց,
 Յեւ իր գերկն առավ հովերը մարմանդ,
 Պոետի դեմքը մեղմանուշ ժպտաց,

Յերբ փոփսացին ծառ, ծաղիկ ու վարդ:
 Մաղկանց հետ մեկտեղ նա մեղմ շշնջաց:
 Գուրգուրեց սրտանց արտերը մոտիկ,
 Ապա սրտաբուխ խոսքեր ինձ ասաց,
 Յերբ վոր մտախոհ նա յեւով վոտի:—

«—Ուրախ եմ, տեսա կյանքը հարածուն,
 Սարոն ու Մոսին դարձել են ախպեր,
 Անուշն ե, հրես, դառել ողաշու,
 Թուշում ե անհոգ, ճեղքում ե ամպեր:
 Ել չկա ձեզ մոտ և վիշտ, և կարիք,
 Վոր իմ յերգերի սիրտն են մորմոքել:
 Հեյ, հայրենի տուն, դարձար յերջանիկ,
 Բո կրճքին անմար գարուն ե յեկել:

Արդ, փառք եմ տալիս քո հերոսներին,
 Վեհ մարտիկներին հողի ու հանքի,
 Վորոնք թաղել են աղաթները հին,
 Ու կյանք են վաքում յերգերով անգին:
 Յեւ միտք եմ անում՝ ինչու նրանց հետ
 Հերոս չեմ յես ել, կռուող առաջին,
 Վոր իմ սրտի սեջ կյանքը բուրավետ
 Հորդ աղբյուրի պես զվարթ կարկաչի...»

Գոհ եր լեռներից, հանգերից նա գոհ,
 Հաճույքով զիտեց ծառ, ծաղիկ ու ծիւ,
 Հայացքը նրա քնքուշ յերեկոյ,—
 Յեւ հոգին ինչպես տիեզերքն անծիր:

ՀԱՅՐԵՆԻՔԻՍ ՀԵՏ

ՀԱՅՐԵՆԻՐԻՍ ՀՅՑ

Հայրենիք իմ արթուն, հարնան խինդ ես լուսե,
Քո մշտավառ մարտում լեզերը՝ շատ ու սեր.
Դու մի ծաղկած պարտեզ, յես մի վարդի կոկոն,
Քո ծոցում եմ բացվում, լցվում կովիդ վոզով:
Թող քո շնչով շնչեմ, ըզգամ հույզերը քո,
Վոր լերդերս փնջեմ վորպես լույսերը քո,
Յես մի վարդի կոկոն, դու հույզ, հնչեզ յերզ ես,
Քեզ, հայրենիք, հույզս և արեառ ձեռքս:

1936

ՅԵՐԳ ԷԱՅՐԵՆԻՔԻՍ

Գեղեցիկ ե հայրենիքն իմ, շողշողում ե վորպես ալմաս,
Պայծառանուն, չքնաղ կրճքում լեռներ ունի ձիգ,
յերկնահաս,
Իսկ լանջերում կյանքն ե ծաղկում—ծառեր, ծաղիկ
պարզ ու գանգուր,
Հասուն, ինչպես բերքի աշուն ե գարունքվա նման
մաքուր:

Ու շնչում եմ յես լիաթոք հայրենիքիս ողբ պայծառ,
Հայրենիքիս բուրմունքն անուշ ինձ միշտ սիրով յերգ ե
ասում:

Ջան, ցնծում ե սիրտս ջահել, սիրտս նրա յերգով արբած,
Իմ հույզերի, յերգի աղբյուր, հայրենիք իմ արևադուն
Փաթաթվելով հայրենիքիս, յերազում եմ դառնալ
զեփյուն,

Այս լեռներին, այն լեռներին վորպեսզի տամ անհազ
համբույր,

Վոր փսփսամ սյգիներին, նրա ծաղկահյգ, արևներին՝
Պոետական հուզն ու բերքին, չափածոյի գոհարներին:

Մնյր իմ, մնյր իմ, քեզ հետ ապրելն ինչ անհաշ ե,
քաղցր ու բարի,
Ձի ձանձրանա ե վոչ մի մարդ, թեկուզ ապրի հազար
տարի,
Կուրծքդ պայծառ նման չունի, տոն ե այնտեղ, խինդ
ու հանդես,

Ամեն մի յերգ տնմար արև, չնաշխարհիկ, պայծառատես,
Աշխարհի մեջ չկա ուրիշ նման ծաղկած քո հանդերի,
Վորտեղ պեսպես գոյն ե ցոլում չքնաղագեղ ե ան-
թերի:

Գիտեմ, գիտեմ, վոր քո ձեռքը ինչպես վոր իմ,
ամեն մեկի
Ճամբի վրա վարդ ե փռում, վոր նա հասնի ուրախ
յերգին:

Քո լույս ծոցից հերոսը քո թռչում ե վեր, դեպի յթեր,
Յեվ հովի հետ պար ե գալիս, սավառնում ե պարզ
ու թեթև:

Յելնում ե նա դեպի արև, բարձրանում ե ջինջ լա-
զուրով,

Քո յերջանիկ եշխով արբած ու սիրասուն յերգ ասելով:

Քո ծոցի մեջ սիրով անշեջ ծիծաղում ե սերունդը նոր,
Յեվ յերգերով քո յերջանիկ կյանքդ ե կերտում մի
փառավոր:

Որսպակելով հսկա ժայռեր ու պատուհով լեռ ու անտառ,
Վառում ե նա լուսապսակ արևների շողերն անմար:

Ու դեռ պիտի հույզը հորդի, հույզը անմահ, բաղմա-
պիսի,

Հանուն, չքնաղ իմ հայրենիք, քո արևի անմար լույսի:

Վոր ճաճանչի յերջանկությամբ մետաքսադործ քո
 ապագան,
 Վոր սերունդը գալիք կյանքիդ ողջ ծծի անմահական:
 Յեզ յես ել եմ յերգում ուրախ, հայրենիք իմ լուսա-
 պայծառ,
 Վոր կանգնել ես հաստատակամ ու անկում ես ծաղիկ
 ու ծառ,
 Յեզ աչքերդ են պայծառանում ջինջ յերկնքի աստ-
 ղերի պեւ,
 Թե անցյալիդ կեսորն եր մութ, արդ գիշերն ել շո-
 դում եքեզ:
 Մայր իմ, մայր իմ, քեզ հետ ապրելն ինչքան լավ
 ե, ուրախ, գերող,
 Վորքան լավ ե քո ծոցի մեջ աշխատանքը պտուղ բերող:
 Յես մի յերգիչ կյանքդ կերպեմ, յերկդ զվարթ ու յեր-
 ջանիկ,
 Ու կմեռնեմ, վորպես հերոս, քեզ արժանի, իմ հայ-
 րենիք:

1937

ՀԱՅՐԵՆԻՔՍ ՆԱՐԵՆԵՐՈՒՄ

Հովն ե որորում ծովը արտերի
 Ու փափսում են հասկերը կանաչ,
 Մարի լանջերում ջինջ ու անթերի
 ժպտում են չքնաղ ծաղիկ ու կակաչ:
 Մերթ լում ես դու մեղմանուչ հովին,
 Մերթ ծաղկանց բուրն ե թափանցում քո մեջ,
 Գլխիդ յերկինքն ե կուսցել մովի,
 Արբած արևի խուրձերով անշեջ:
 Լեռներ են զուգվել լեռների կողքին,
 Հագած անտառի շորերը կանաչ:
 Լում ես սիրով ձորերի խորքից
 Հորդ գետակների աղմուկ ու կարկաչ:
 Նորից գեփյուռը ծաղկանց բուրավետ
 Նանիկի նման իր խաղն ե ասում,
 Կուռն վարդերի ալ շուրթերի հետ
 Անուշ ձայներով բոլ լոյուլն ե խոսում:
 Հայրենի հողը այսքան գեղեցիկ,
 Փետերով իր հորդ փովել ե անծայր,

Կրժքին ցնծում ե կյանքը յերջանիկ,
Եւ մի տեղ չունի անբերրի, անծառ:

Դիշերը պայծառ ցերեկ ե դարձել—
Այգիներում ճոխ ու պայծառանուն,
Ծառերը հղի մեկնում են գանձեր,
Ժիր ալգեպանին ձեռքով են անում:

Հայրենի հողը ազատ ու անծիր,
Ցնծում ե անհոգ, մոր պես հարազատ,
Իր զավակներին ժպտում ե անգին,
Ու ճամբին փոռում բուր ծաղիկ ու վարդ:

Ստանին, մեր կյանքը աշպես զեղեցիկ,
Ամեն սրտի մեջ ծաղկել ե զվարթ,
Դու ալիր մարդուն խինդը յերգեցիկ,
Յեռանդը անբիծ, ե՛ ծաղիկ, ե՛ վարդ:

Ժողովուրդը քո աստղեր են անշեջ,
Դու աստղերի մեջ արեգ իմաստուն,
Ստանին, քո սիրտը ժողովուրդն ե մեծ,
Յեւ ժողովուրդը Ստանինն ե արթուն:

ՅԵՐԿՐԻՍ

Մանուկ եյի զեղին, վտիտ,
Մորս զրկում սոված ու մերկ,
Յերբ զույգ եկար՝ դեմքիդ ժպիտ,
Սրտիս իջա՛վ յեռանդ ու յեռ:
Շնորհակալ եմ քեզ, դու իմ աստղ,
Վոր յելել ես վառ, խնդաբարձ.
Քո լույսը դառ՝ ինձ համար արդ
Յերջանկութուն, յերգ ե ու գանձ:

ՎԵՐԱԾՆՈՒՆԴ

Այս մահամերձ ծառը հաղարդ տալու,
Անթե ազոավի պես կանգնել ե զեռ,
Յեվ տնքում ե նորից, վոր այս գարուն
Կրկին տերե կապի, բարձրանա վեր:
Մակալն ուշ ե արդեն՝ պառավ ե, ծեր,
Աճող ծառերի տակ պիտ մահանա,
Արդ չոքել ե զողզոջ ե նայում ե վեր,
Ինչպես մի աղերսող ծեր քահանա:
Այս ծառի պես մեռնող հին կյանքը մութ,
Փթած կոճղն ե թափում, րհնում թափուք,
Յերբ պալքարում գերող հերոս սերունդ
Նոր աշխարհին մի նոր լույս ե կապում:

1937

ԻՄ ՈՐՈՐՈՑ

1.

Իջավ յեկրիս ուր մարտի,
Ցնծաց յերկիրն իմ վոսկեզոծ.
Վարդն ե կարմիր,
Վոչ, իմ յերկրի
Լույս ճակատն ե իմ որորոց.

2.

Հեյ, որորոց, զգվում եմ քեզ,
Համբուրում եմ, յերգեր ասում,
Յեվ նայում եմ քո ժպտերես
Աչքերին պերճ, արեազուն:
Իմ աչքն ել ե աչքերիդ մեջ,
Աչքերիդ մեջ կա մի գալիք,
Վոր պիտ շողա սիրով անշեջ,
Մեր կյանքից ել զեռ յերչանիկ:

3.

Յեկավ գարնան ուրը յերգի,
Յնծաց յեկիւրն իմ վոսկեզոծ.
Վարդն ե կարմիր,
Վնչ, իմ յերկրի
Լույս ճակատն ե իմ ուրորոց:

1937

Կ Ե Ն Ա Յ

Յերջանկության շունչ են առել
Քո հանդերը, քո արտերը,
Պերճ ճակատիդ, վերսկս արե,
Բարձրացել են քո վարդերը...
Յերկիր իմ, մեր կամքն ենք վառել
Ու թաղել ենք քո դարդերը,
Թող վոնց լույսի մի շաւր լան
Հար շողշողան քո զարդերը:

1936

*
* *

Մութ ամպերը հեռացան, սրտիս իջավ խնդություն,
Ու թեն ուրերս անցան, սրտիս իջավ խնդություն:

Ծաղիկները բուրեղին, ժպտաց կյանքի յերգը վառ,
Շողաց յերկնին ծիածան, սրտիս իջավ խնդություն:

Մեր յերջանիկ կյանքի պես, սրերի պես ժպտերես,
Կյանքիս վիշտը չորացավ, սրտիս իջավ խնդություն:

Շողաց յերկիրն իմ անգին—սին անցյալի դատավոր,
Հոյ, հին կյանքը մահացավ, սրտիս իջավ խնդություն:

1936

Հ Ա Յ Ր Ե Ն Ի Ք Ի Ս

1.

Արդեն ցնդել ե վիշտդ ամպերի պես ցիրուցան
Հորիզոնիդ կապուտակ շողշողում ե ծիածան.
Զկա մաշում որերիդ, չունես տանջանք ու տրտունջ,
Խիղախ կրծքիդ կապել ես ինչքան շքեղ ծաղկեփունջ:
Յերեկ իմ թույլ ե անուժ սրտին իջել եր տրտում
Զինչ յերկնքն եր իմ գլխարկն ու կյանքը իմ ան-
խնդում:

Մորս զրկում գլխիկոր միշտ յեղել եմ աչքս թաց,
Հառաչել եմ յես անգոր, յերբ չեր տալիս կտոր հաց:
Ինչքան կապույտ անուրջներ ինձ տանջել են յերազում,
Կյանքը խթան ե դարձել, վոչ մի արև չեր նազում.
Զկար վոչ մի հաղթանակ, չկար արև, ուժ ու սեր,
Զեր ճառագում սրտաթույլ հորիզոնից վառ լույսեր:

2.

Վորքան խանդոտ յերազներ յերգ են դարձել վոզեմու,
Քո բովի մեջ ես խանձել, կապել ես մի լույս կամար.
Կյանքդ դարձն ծաղկաշող... ինչ ե քո դեմ մի յերազ,

Յերբ քո սիրան ե շողշողում, վորպես մաքուր վռակ
թաս:

.....
Ինձ գրկել ես գրկարաց ու կոփում ես քո բովում,
(Ինձ պես վորքան սիրակեղ ջահել սրտեր ես թովում)
Կաթ ես տալիս հորդ ծծով գինվորիդ վորք ու չնչին,
Վորն իր յերգերն ե խառնում քո հանճարեղ կարկաչին:

Արդեն ցնդել ե վիշտդ ամպերի պես ցիր ու ցան,
Ջան կապել ես դու հիմա հաղթանակի ծիածան.
Քո սրտի մեջ յերգ ու սեր, չունես տանջանք ու արը-
տունջ,
Ու բացվել ե կրծքիդ մաս ինչքան չքնաղ ծաղկեփունջ:

1936

ՅԵՐԳԻ ԾՆՈՒՆԴԸ

Նա հնում ծնվեց նգովքի ներքո,
Նման եր հանդի թափառիկ հովին.
Միշտ թույն եր ստանում տերերի ձեռքով,
Չուլվում եր տխուր մտքերի ծավին:

Յեվ աճում եր նա վերքոտ, տխրաձայն,
Մանում եր վշտով ե զյուզ, ե քաղաք,
Ասպես միասին, մեկտեղ մեծացան
Յերգը ե մարդու տխուր հառաչանք:

Մերթ անձրևի հորդ խշխշանքի տակ,
Մերթ սև զիշերվա, մեթ ահեղ քամու.
Վշտալից, սակայն մեղմիկ ու հստակ
Ջնդում եր, ինչպես քչքչան առու:

Ապրեց տխրաձայն...սակալն կենսավետ
Նրան որորեց ժողովուրդը մեծ.
Յեվ հայրենիքիս հերոսների հետ
Նա յերկրորդ անգամ յերջանիկ ծնվեց:

Յեվ մտավ շնհոգ ամեն հյուզ ու տուն,
Ամեն բակ շրջեց ու բախ, հրճվազին.

Մերթ անտառի մեջ գնդում ե խնդուն,
Մերթ շողում զվարթ լեռան զազաթին:

Մտնում ե ալգում, հանդում ու արտում,
Ժիր մանուկների սրտում կաթոգին.
Լուսե խինդ տալիս ամեն մի մարդու
Իր անուշ, ու բախ, յեռանդով անգին:

Մեր հայրենիքում՝ մեզ միշտ հարազատ,
Ուր ծաղիկ չկա թռչնած ե անրուշ,
Ուր ամեն մի մարդ շնչում ե ազատ,
Մոտենում նրանց, տալիս ե համբուշ:

Ապրում ե առաջ ուրախ, բուրավեա,
Մնում ե նրան ժողովուրդը մեծ.
Պերճ հայրենիքիս հերոսների հետ
Նա յերկրորդ անգամ յերջանիկ ծնվեց:

1937

6

Կ Ե Ն Ա Ց

Հայրենիքիս արեր՝ ջահ,
Լույսը՝ շատրվան,
Ծաղկանց հոտն ե շրջում անմահ,
Զուրը կլկան:
Ծծենք թասից ուրախ կյանքի
Բուրմունքը վառման,
Ֆերդենք մեր մեծ հայրենիքի
Ֆերզը հուրհուրան:

Նրա կենսոց, ով մեր յերկրին
Խինդ ե տալիս մաքուր,
Ով հանգերին, պերճ արտերին
Գուրգուրում ե արթուն,
Նրա կենսոց, ով մութ թլուսին
Ծովում դամբն ե թրջում,
Ով սրտառու չ մինչև լուսին
Թևում ե վանց թռչուն:

Հայրենիքիս արեր՝ ջահ,
Լույսը՝ շատրվան,
Ծաղկանց հոտն ե շրջում անմահ,

Զուրը կկլան,
 Ծծենք թասից ուրախ կյանքի
 Բուրժուները վառման,
 Յերգենք մեր մեծ հայրենիքի
 Յերգը հուրհուրան:

 Նրա կենաց, ում մոտ վոր կա
 Աշխատանքի պատիվ,
 Ով սրտանուշ զնում ե քար
 Շարվող հսկա պատին,
 Վողջնւյն նրան, ով վոր կյանքին
 Տվեց խինդ ու ծաղիկ,
 Ով մարդկութւան համար անգին
 Կերտում ե վառ գալիք:

Հայրենիքիս արեր՝ ջահ,
 Լույսը՝ շատրվան,
 Ծաղկանց հոտն ե շրջում անմահ
 Զուրը կկկլան,
 Ծծենք թասից ուրախ կյանքի
 Բուրժուները վառման,
 Յերգենք մեր մեծ հայրենիքի
 Յերգը հուրհուրան:

1937

ԳԱՐՆԱՆԱՅԻՆ

ԳԱՐՆԱՆԱՅԻՆ

Հայրենիքիս սիրավետ մետաքսե կուրծքն ե անուշ,
Յեւ արտերը թավիշե, կանաչ թելեր ու ծածան,
Յերբ արեւը ջերմառատ գերող աչքերն ե վառում,
Յեւ իմ յերկրի կրճի մեջ լույս ե ցանում ցիր ու ցան:

Ծարավ հոգիս խմում ե խնդու թյունը այս վաբար,
Սիրտս սիրով ե ժպտում ինչպես բացված կարմիր վառդ:
Հասկերն անուշ աչքերով ե բուրավետ, ե դալար,
Ծփում են հեզ նազանքով, վաղչունում են ինձ զվարթ:

Վառման սիրտս հարբում ե ծագկանց հոտով արևոտ,
Յեւ յերգերն ցնծում են, ինչպես մի վառ կովի դրոշ,
Գլանքը իմ գեմ ե շողում, վարպետ պայծառ առավոտ:

Այնքան լուսե անուբջներ, այնքան կարոտ, յերգ ու սեր,
Այնքան սրտեր հրավառ, վոր ժպտում են սիրակեղ,
Ազմկում ե սիրտս վառ շքեղ լեռազների պես...

Հայրենիքիս սիրավետ մետաքսե կուրծքն ե անուշ:

1935

ԳԱՐՆԱՆ ԱՐԵՎԻՆ

Արշալուսի աղջիկ, շողան գվարթ,
Սփռի՛ր վառսերը քո ջինջ ու զանգուր-
Թող ժպտան սիրով ծաղիկ ու վարդ,
Ու լցվի կյանքը բույրով ժաքուր:

Շողան, սիրուն աղջիկ, շողան պայծառ,
Թափի՛ր շողերը քո պարզ ու վառման,
Թող բոբր հողիս յեկնի կիզիչ այնքան,
Վար յերգս քեզ պես լինի անմար:

1935

ԱՆՈՒՇ ԳԱՐՈՒՆ

Շուրջն խնդություն, վարդեր են բացվել,
Բուրմունք ե լցվիլ ալգում ու արտում,
Ամեն ինչ կանաչ, խառ գույն ե հագել,
Անուշ գարուն ե իմ հայրենիքում:

Ծաղիկ են պես-պես ծիլ, ծաղիկ ու ծառ,
Պեծերը շնչող փռվել են մաքուր,
Խոտում ե առուն, յերչում ե ծիծառ,
Անուշ գարուն ե իմ հայրենիքում:

Վեռներ են հաղել թավիչ ու կանաչ,
Զուգվել, զարդարվել անտառով զանգուր,
Նորից կենսալից արև ու ճաճանչ,
Անշու գարուն ե իմ հայրենիքում:

Հովն ե ահռել ծովը արտերի,
Ֆերգեր են գլգում արտում, հանգում,
Ցնծում ե կյանքը առատ ու բերրի,
Անուշ գարուն ե իմ հայրենիքում:

Փառք այն արեին, վոր խինդ ե զարձիլ,
Գրկում ե կրեմից ծաղկին ու մարդուն,
Աշխարհ իմ, վոնց ես դու փարթամացել,
Անուշ դարուն ե իմ հայրենիքում:

1938

Պ Ե Ե Զ Ա Վ

Պատուհանիս մոտ թռավ մի ծիծառ,
Ճովոդեց կայտառ իր թռվյանքը մեծ.
Կարծես թե սրտիս հույզի ծոփն անծայր
Ձայն տվավ նրան ու անուշ յերգեց:

Բուրեցին յերգիս պերճ վարդերն ու ծառ,
Լուսարացի պես զվարթ շողացին,
Յեվ յելան կրկին հույզերն իմ կայտառ,
Ինչպես հորդ ծովի ալիքներն անձիր:

Պատուհանի մոտ թռավ մի ծիծառ,
Յերգեց զարունքվա կանաչ արտ ու ծառ:

1936

Գ Ա Ր Ո Ւ Ն

Ո՛ր, վե՛հ յերկրիս չքնաղ գարուն՝ լուսատես ու գառ,
Ի՞նչ ճոխ լույսի, դու պերճ հույզի մի վոսկեղեն դար,
Քո գրկում են ծլում, ծաղկում ծաղիկ, վարդ ու ծառ,
Բազմապիսի մաքառումի յերգերը պայծառ:
Մութ ձորերում ընկած մարդուն շողացիր դու վառ,
Գիրկդ բացիր, դուրգուրեցիր, վորպես գթոտ մայր,
Ու յերեկվա մշուշը ծեր, և թեն, նենդ ու դառ՝
Զոքեց քո ալ վոտների տակ՝ ամպերի պես մառ.
Քանի արև փայլատակեց, ծաղկեց հանդ ու սար,
Յես ել, գարուն, քո բաց ծոցում գարձա խանդավառ:

1936

Ա Ռ Ա Վ Ո Տ

Ինչպես շիկնած յերկաթ ու հուր,
(Վոր ժպտում են, վորպես նարինջ)
Շեկ վարսերը փոեց հանուր
Արշալույսին արևը ջինջ:

Հորիզոնն և կարծես պայթում,
Ջահն և վառվում իրա մեջքին,
Բարկ արևն և ճառագայթում
Հայրենիքիս կանաչ կրճքին:

Յե՛վ նա այնտեղ թնչ և յերգում,
Ի՞նչ և յերգում նա այս պահին.
— Լերոսներն են արև կերտում,
Շունչ են տալիս հողին, քարին:

Ողն և լցնում շոինդ ու ճիշ,
Յերգեր ու սեր, խինդ ու կարոտ.
Վողջույն, վողջույն պայծառ ու ջինջ
Խորհրդային բորբ առավոտ:

1935

ԲԵՐԺԻ ՅԵՐԳԵՐ

ՄԵՐ ԱՐՏԵՐՈՒՄ

Մեր արտերում հովը խաղաց,
Ծովը խաղաց անձուշ, անձուշ.
Արտերի ծով համատարած
Վոսկի դարձան բերքով անուշ:

Մեր արտերում արփին նարինջ
Ահա ժպտաց նորից անուշ,
Գործի անցան հույզերով ջինջ
Բրիզադները անձուշ-անձուշ:

Հնձվորների լեռանդով ժիր
Բերքը յկավ արտից անուշ,
Ցեվ աշխատանք, և խինդ անծիր
Ծով արտերում անձուշ-անձուշ:

1934

ՆՈՐ ԵՍՐԴ

Մեղմանուշ հովն ե խաղում,
Արտերի ծովն ե խաղում,
Յարիս ալտերին մարմար
Արևի բովն ե խաղում:

Արևի բովն ե վոսկի,
Առտերի ծովն ե վոսկի,
Մեռնեմ ես անուշ կյանքին,
Մեր պայծառ ոըն ե վոսկի:

Իմ յարը հովի միջին,
Արտերի ծովի միջին,
Սիրով լի հունձ ե անում
Պայքարի բովի միջին:

Իմ յարի դռնին մի տես,
Խփած վառ դրոշին մի տես.
Մաքառման ճամբի միջին
Արևի շողին մի տես:

Մեղմանուշ հովն եմ սիրում,
Առավան ցողն եմ սիրում,
Յարիս կարմրաթուշ դեմքին
Արևի շողն եմ սիրում:

1935

Ա Շ ՈՒ Ն

Պերճ նազանքով, պայծառ բերքով
Յեվ մրդերով վառ ու հասուն,
Նախշուն թևեր փռեց յերգով
Հյուսիսով լեցուն վառման աշուն:
Հովերն անուշ յերգեր ասին,
Փսիսացին զվարթ տաղով,
Ընկուղենին խնձորենուն
Ձեռքով արեց, խշշաց խաղող:
Ծառեր թեքված սաղարթախիտ
Մրգերով զառ ու կենսաթով,
Վորոնք սնվել մեծացել են
Բարկ արևի անմար կաթով.
Այսուր պիտի խնդան ուրախ,
Պիտի բացեն չքնաղ հանգես,
Ինչպես տատիս հեքիաթներում
Ժպտում եր մի ծագկած պարտեզ:
Այգիներից արևակոխ
Բյուր պսակներ պիտի հյուսենք,
Կենսաթրթիո յերգի-մրգի
Անուշահամ սարեր դիզենք:

Արևի գեմ վաղը նորից
 Թող շողշողա ծիլը հողի,
 Վոր կենսաթով բերքով բացվեն
 Այգիները ճոխ խաղողի:
 Պերճ նազանքով, պես-պես բերքով,
 Յեւ թևերով վառ ու նախշուն,
 Իջավ չքնաղ հայրենիքիս
 Առատաբեր պայծառ աշուն.
 Ու հովերն ել պայծառաթեւ
 Փսիսում են անուշ սիրով,
 Յեւ մրգերին փաղաքշում են
 Սիրահարի ջերմ համբույրով:

1936

ԿՈՒԽՈՉԱԿԱՆ ՅԵՐԳ

Մենք այգի ունենք թավիշ կանաչով,
 Շնչում են այնտեղ ծաղիկ, վարդ ու ծառ,
 Մնվում են նրանք արևի փնջով,
 Յեւ զարդարվում են, և զուգվում պայծառ:

Ծառեր հղի յեն՝ կանգնած պտղարարձ,
 Նայում են իրար, ձեռքով են անում,
 Յեւ ուրախություն վառվում և անսանձ,
 Յերբ հովն և նրանց յերգերը մանում:

Պես-պես ծաղիկներ ժպտում են սրտանց,
 Բուրում են նրանք այնքան կենսաթով,
 — Գուցե կտեսնես այգին մեր ծաղկած,
 Հիացքից նրան կնայես խանդով:

Փանք քեզ, իմ յերկիր, յերջանիկ, անգին,
 Փանք մեր հույզերից, յերգերից, հողից՝
 Բո ծոցում աճեց մեր պայծառ այգին
 Ու հեռու մնաց զարշապատ հողմից:

1936

Թ Ա Մ Ա Բ

Վրացուհուն

Ահա կրկին, կրկին կանգնել ես դու իմ դեմ,
Շունչ ես տալիս յերգիս, հույզ ու վարար հրդեհ:
Յեվ ուզում ես յերգեմ յիրզը կիզիչ այնքան,
Ինչքան ժպտում ե վառ կրծքիդ շքանշան,
Յեվ ուզում ես լինի յերգս բուրումնապետ,
Վոր քո սրտին բուրա, սիրով ժպտա քեզ հետ:

Յեվ ինչպես քեզ չերգեմ յերգերով իմ խնդուն,
Յերբ վոր վարարում են հույզերը իմ սրտում,
Յերբ վոր անափ դաշտում մղում ես դու պայքար,
Յերգերս իմ սրտում փոթորկում են, Թամար,
Ու տես, վարարում ե յերգերիս ջինջ առուն,
Բո դեմ բարձրանում ե յերգս հույզով յեռուն:

Դա յերեկ չէր, Թամար, յերբ վոր ինքդ գվարթ
Հողի ամբռնությունը ճեղքում եյիր հպարտ.
Կրծքիդ բոց եր տալիս, արշալույսի նման,
Հերոսության, փայլում կարմիր շքանշան.
Այդ դաշտերն անծիր արծաթեկ են արդեն,
Ճերմակ ծովի նման լայն բացվել են քո դեմ:

Յեվ դու ահա կրկին բորբոքում ես յեռանդ,
Շուրջդ աշնանային դովն ե փչում մարմանդ.
Քաղում ես դու բամբակ ջինջ ձյունից ել հստակ,
Վոր մեր դարում այս վեհ յերգես պարզ ու վստահ,
Վոր քո շունչը ձուլվի յերկրիս յեկնոց վազքով,
Շնչին նորից դաշտեր և ծիծաղեն բերքով:

Շունդալից դարիս հերոսուհի, Թամար,
Ձեռքս ել, սիրտս ել քեզ տամ ու իմ յերգը վարար:
Դու մաքառման այս վեհ, այս վերելքի ժամին
Ժիր մասնիկ ես փոքրիկ՝ մեր մեծ հաղթ աշխարհի:

1934

Կ Ո Ւ Խ Ի Դ Ա Յ Ո Ւ Մ

Շուրջս յեղնիկի վաղբը չտեսա,
 Յեվ առաջ անցա,
 Դեմքիս մեղմանուշ աշունքովա հոգին եր
 Շոյում ու խփում,
 Բռնած ունեյի յես իմ ձեռքերում
 Մի հին հրացան,
 Բայց ինչիս եր պետք, յերբ յեղնիկ չկար
 Յեվ վոչ մի թփում:
 Հիշեցի՝ իմ դեմ լսի յեզերքին
 Զօքեց մի յեղնիկ,
 Բայց նայում եմ արդ և ել չեմ տեսնում
 Անգամ նապաստակ,
 Իզուր ես չըջում, հուզվում ու տանջվում
 Իմ սեուկ շնիկ,
 Այսօր Կոլխիդան վոսկեգոծվել ե,
 Շնչում ե հստակ:
 Ո՛ր, դու իմ շնիկ, յերեկ այս հովտում
 Ճահիճ կար. թփեր,
 Արդ վոսկե հանդեր: Քեզ հետ հանդերով
 Անցա, գնացի,
 Տեսա այգիներ, մեջ չնաշխարհիկ
 Նարինջ ու վարդեր,
 Ու յես նախանձից ուզեցի դառնալ
 Ժիր Կոլխիդացի...

1937

Վ Ե Ր Հ Ո Ւ Շ

Յեա հիշում եմ՝ գիշեր եր, թեն եր փռել մութը խոււ,
 Մեր նկուղի առջևում սփռվում եր թթենին.
 Իսկ իլիկի հետ, մայր իմ, յերգում եյիր դու տխուր,
 Վախտ, մոմե մատներով կապում եյիր թել-թելին:
 Դեմքիդ, աշնան ցելի պես, տարիների ակոսներ,
 Զյուն եր իջել մազերիդ, աչքերիդ մեջ խոր արտում.
 Փարվում եյիր, մայր իմ, ինձ, մաղթում եյիր պայծառ
 սեր,
 Գողում եյիր արամաշ... սիրում եյիր քո վարդուն:
 Դրսում ցուրտ եր ու մեղմիկ սփռվում եր թթենին.
 Վորդիդ սոված եր, մայր իմ, ուղեց քեզինց մի քիչ հաց...
 Հանկարծ մարմինդ դողաց և աչքերիդ բրբերին,
 Աշնան առաւ ցողի պես, յերկու կաթիլ յերևացւ
 Այդ մութ գիշերը անցավ ցավով, դավով ու վերքով,
 Այդարացը շողշողաց բարկ յերգերով ու կայտառ.
 Մայր իմ, վիշտդ չորացավ կյանքի բուրեց կենսաթով,
 Ինչպես լեռան լանջերում ծաղիկների մի անտառ:

Մայր իմ, հիմա դարուն ե, Յերեվանում եմ արդեն,
Սնվում եմ այս քաղաքի բարկ արևի ջերմ կաթով,
Գիտեմ, դու ել Կախեթում, ձեռքիդ բռնած վառ վարդեր,
Պերճ ժպտում ես նոր կյանքին և սրտառուչ և խանդով:

Ահա ձեզքս մեկնում եմ Յերեվանի ճոխ արգում,
Մայր իմ, բաժակդ լցրու կարմիր գինով Կախեթի,
Խրար դարկենք բաժակներ, թող հաժըռյր տան մեկ-մե-
կուն

Թող մեր կենացն արժու պես ժպտա յերկրիս վեհ յերթին:

1933

ՔԱՌՅԱԿՆԵՐ

Յերբ հառում եմ անել մորս
Աչքերս բոց, խնդալից,
Հին կյանքը մեզ նայում ե ինձ
Նրա դեմքի ծալօքից.
Մի պահ, ավաղ, ասես մարմնիս
Նստում ե վերք, խոր մի ցավ,
Ապա հարցնում եմ սայրիկիս՝
Հին կյանքին զո՞նց դիմացար:

Իմ սիրուհուն ասի մի ուր,
Թե յես ունեմ յերկու մայր,
Գուրգուրում եմ նրանց սիրով,
Վոնց աչքի լույս, աչքի փայլ
Նա դարձացավ, հարցրեց մոռյլ.
— Քեզ վերահեղից յերկու մայր.
Ասի, հողիս, մայրս ե ե՛ իմ
Հայրենիքը ծաղկավայր:

Մութ գիշերին այգը փոխեց,
Դաժան ձմռան՝ դարունը պերճ,
Ընտանիքս կոխողի մեջ
Կյանք ե վարում ուրախ, անդեջ.
Մի իղձ ունեմ ա,ս ճոխ կյանքում,
Բորբորում ե սիրտս անկեղծ,—
Կուգեմ յերկնի արևը թեժ
Կոչվի Ստալին՝ անունով մեծ:

Վորժան յերգ կա իմ սրտում,
Յերգ ու բերք կա իմ սրտում.
Վոսոխիդ դեմ, յերկիր իմ,
Մարտ ու զենք կա իմ սրտում:

Թե լսում ես խնդր մանկանց
Առվի պես ժիր, մարդարտացող,
Թե արբում ես բույրով ծաղկանց
Մեր լեռներում վեր խոյացող,
Այդ լույսն ե վառ մեծ Ստալինի,
Վոր վառվում ե արևաշող,
Վորից կանաչ շորեր հագան
Մեր աշխարհի ծաղիկ ու հող:

Հայրենիքիս լայն կրճքի մեջ
 Լեռներ կան ձիգ, վռակեթույր,
Իսկ լանջերում ծաղիկներ պերճ՝
 Արևաններկ, քաղցրարույր.
Անմահու թյան լույսն ե անշեջ
 Վառվում ամեն հյուղ ու տուն
Զմն, հայրենիք, դարձել ես դու
 Ուրախ կյանքի մի աղբյուր:

Հայրենիքս արեագուն

 Մի զարուն ե լուսահեր,
Զունի մի ծառ չոր, անպտուղ,
 Յերջանիկ ե կյանքը մեր.
Ամեն վարդից, ամեն հասկից
 Լույսն ե զվարթ շողշողում,
Ել լճն առեմ կյանքիս մասին,
 Յերբ ուրախ ե մայրս ծեր:

Պատմութեան մեջ շողաց անշեջ
Յերկու արե բոցավառված.
Մեկը՝ հզօր Հովտեմբերն ե՛
Լույսի, հուլիի յերգով տարված,
Մյուսը՝ մեր չերջանկութեան,
Անմահութեան կաթի աղբյուր՝
Որենքը նոր՝ ուրախ, անգին՝
Առաջնորդի ձեռքով գրված:

Բո՛ւ արտի մեջ սեր կա անշեջ,
Լույս կա պայծառ, անարատ,
Յերգի հուր կա, ծաղկի բույր կա
Հայրենիքիս հարազատ.
Իմ յերկիրը մի ծաղկանոց,
Դու յերկրիս մեջ վառ ծաղիկ,
Ցոգ ես առնում, շողուն դառնում
Ու ցնծում ես հորազատ:

Հայրենիքիս նման ազատ
Վողջ աշխարհում չկա ուրիշ,
Ստալինի պես հայր հարազատ
Վողջ աշխարհում չկա ուրիշ,
Մեր հանդերձ, վառ վարդերից
Անմահական բույրն ե հոսում,
Իմ յերկրի պես չքնաղ, ազատ
Վողջ աշխարհում չկա ուրիշ:

Քայաֆն ասաց խմենք գինի,
Վոր մեր սիրտը խնդուն լինի,
Յեվ սիրունուն, և ամենուր
Նա մեկնում եր պուրպուր գինի.
Յեթե, ավանդ, մենք խմեյինք
Ու ֆուրկինք նրա ճամբին,
Մեզ ո՞վ կտար յերջանիկ կյանք,
Ո՞վ կվառեր բոցեղ արփին:

Ո՛վ, հայրենիք, մտքով հարուստ,
Յերդով առատ, յերջանիկ,
Սերունդների ճամբի վրա
Լույս ես փռում ու ծաղիկ
Ամեն մեկը քեզ հարազատ,
Շնչում ազատ քո փառքով,
Յեվ լույսիդ տակ սիրով վարար
Քեզ ե յերգում քո հանգով:

ԾԻԾԱԳ.

Շատ ծիծաղ եմ տեսել կյանքում,
Հաճախ նրանք սիրտս են այրել.
Մեկից դաժան թույն եր կաթում,
Մյուսի մեջ խաղում արև:

Յեվ զեռ կա մարդ, վորի սրտում
Լսկ նենգության վիշտն ե վառվել,
Հողին նրա մութ ե, տրտում,
Բայց ժպտում ե նորից նա զեռ:

Արդ հիշեցիր խինդը նրա,
Պարնան զեղին վարդի նման,
Քեզ չեք սիրում, բայց կրկին նա
Ժպտում եր, վրնց քո սիրեկան:

Սրտումս կա անափ ծիծաղ,
Սերը ուրախ հայրենիքի,
Նա վառում ե պարզ ու չքնաղ,
Վոչ մի շվաք չի մամուռի:

ԻՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՅԵՐԳԵՐ ԳՐՎԱԾ ԱՌԱՋՆՈՐԴՆԵՐԻ ՄԱՍԻՆ

1.	Լենին	9
2.	Մուսկով	12
3.	Յերգ առաջնորդին	14
4.	* * *	16
5.	Աշտարակի կոլեոգիկի խումբն առաջնորդի մասին	17
6.	Առաջնորդի հայրենի քում	19
7.	Իմ ձայնը քեզ, առաջնորդ	22
8.	Ստալին	24
9.	Քեզ, ընկեր Քելման	27
10.	Արյունոտ հողը	30
11.	Յերգ Ստալինին	33
12.	Մեր սիրելի Մոլոտով	35
13.	Մովզդիկ	36

ՀԵՐՈՍԱԿԱՆ

14.	Գոմյերիտական քայլերդ	39
15.	Հերոսներ	41
16.	Յերգում հայրենիքին	44
17.	Յերգ հերոսներ	46
18.	Ոգաչու աղջկան	48

19.	Կարմիր վարդը	50
20.	Կարմիր պահակը	51
21.	Իսպանական	52
22.	Մոր խոսքը	54
23.	Կոմյերիտուհի	56
24.	Գեղջիկական	58
25.	Խորհրդային Հայաստան	59
26.	Վրացական	62
27.	Ֆերեզան	63

ԽՆԴՈՒԹՅՈՒՆ

28.	Սրտիս մեջ ամառ ե հասուն	69
29.	Ո՛ր, սիրտ իմ, յերգում ես անուշ .	70
30.	Նորից ծագում ես սիրտ իմ վառ	71
31.	Ո՛ր, կյանք իմ, յերկնի տակ լաղուր	72

ԳԱՐՆԱՆ ԾԱՂԻԿՆԵՐ

32.	Գարնան ծաղիկ	75
33.	Ծաղիկներ	77
34.	* *	79
35.	Որորոցի յերգը	80
36.	Պիոներուհուն	82
37.	Մի բալիկի	83
38.	* * *	84

ՅԵՐԳԻ ԱՐՔԱՆԵՐ

39.	Մաքսիմ Գորկու հիշատակին	87
40.	Շոթա Ռուսթավելուն	88
41.	Թումանյանի հետ	90

ՀԱՅՐԵՆԻՔԻՍ ՀԵՏ

42.	Հայրենիքիս հետ	95
43.	Յերգ հայրենիքիս	96

44.	Հայրենիքս նկարներում	99
45.	Յերկրիս	101
46.	Վերածնունդ	102
47.	Իմ սրբոց	103
48.	Կենաց	105
49.	* *	106
50.	Հայրենիքիս	107
51.	Յերգի ծնունդը	109
52.	Կենաց	111

ԳԱՐՆԱՆԱՅԻՆ

53.	Գարնանային	115
54.	Գարնան արևին	116
55.	Անուշ գարուն	117
56.	Պեյզաժ	119
57.	Գարուն	120
58.	Առաժոտ	121

ԲԵՐՔԻ ՅԵՐԳԵՐ

59.	Մեր արտերում	125
60.	Նոր յերգ	126
61.	Աշուն	127
62.	Կոլխոզական յերգ	129
63.	Թամար	130
64.	Կոլխոզայում	132
65.	Վերհուշ	133

ՔԱՌՅԱԿՆԵՐ

66.	Յերգ հասում եմ անել մորս	137
67.	Իմ սիրուհուն ասի մի որ	138
68.	Մութ գիշերին ալքը փոխեց	139
69.	Վորքան յերգ կա իմ սրտում	140
70.	Թե լսում ես խիստ մահկանաց	141
71.	Հայրենիքիս լայն կրճի մեջ	142

72.	Հայրենիքս արեազուն	143
73.	Պատմութեան մեջ շողաց անդի	144
74.	Քո սրտի մեջ սեր կա անդի	145
75.	Հայրենիքիս նման աղստ	146
76.	Խայամն ասաց խմենք զինի	147
77.	Ո՛վ հայրենիք, մտքով հարուստ	148
78.	Ծրծաղ	149
	Բովանդակութուն	151



Պատ. խմբագիր՝ Հ. Մկրտչյան
Քեզարգեոտական ձեռագրող և
տեխ. խմբագիր՝ Ստ. Ալթունյան
Սրբագրելի՝ Ա. Արդաբանյան
Շտապկի նկարը՝ նկ. Գ. Բրտ. տյանի

Գրավիլտի լրագոր. Ա.—4133 Հրատ. 4624

Պատվեր 495. Տիրած 3000

Թուղթ 62×94 . Տպագր. 10 մամ.

Մեկ մամ. 25,600 նշան.

Հանձնված և արտադրության 9 մայիսի 1938 թ.

Ատոցադրված և տպագրության համար 23 նոյեմբ. 1938 թ.

Պետհրատի 1 տպարան, Ցարեվան, Լենինի 65

25

25 25

ՀՀ Ազգային գրադարան



NL0330052

22477